Ազգ
Azg
12 ՅՈՒԼԻՍ 2013 ՈՒՐԲԱԹ 118(5201)
ISSN: 1829-1651

# Մեհրիբանին կարծես «աքսորել են»

Մինչեւ վերջերս ադրբեջանական լրատվամիջոցները Իլհամ Ալիեւի հետ գրեթե հավասարի իրավունքով տեղեկատվություն էին տարածում նաեւ առաջին տիկնոջ հանրային-քաղաքական գործունեության, հանդիպումների մասին: Շուրջ 10 օր է՝ պատկերը կտրուկ փոխվել է: Մեհրիբան Ալիեւայի մասին վերջին տեղեկությունն այն է, որ անցյալ շաբաթասկզբին գտնվում էր Կաննում, որտեղ անցկացվում էին «ադրբեջանական մշակույթի օրեր»: Նա, ընդսմին, Ֆրանսիայում էր գտնվում երկու դուստրերի եւ որդու՝ կրտսեր Հեյդար Ալիեւի ուղեկցությամբ:

Այդ եւ այլ «մանրուքների» գուցե անդրադառնալու անհրաժեշտություն չէր լինի, եթե Ադրբեջանից Մեհրիբան Ալիեւայի բացակայության օրերին Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նովրուզ Մամեդովը չհայտարարեր, որ «Մեհրիբան Ալիեւան նախագահական ընտրություններում պաշտպանում է Իլհամ Ալիեւի թեկնածությունը»:

Մամեդովի ասածից պարզ է դառնում, որ Մեհրիբան Ալիեւային նախագահի թեկնածու առաջադրելու մասին խոսակցությունները բոլորովին էլ հիմնազուրկ չեն, ինչպես ավելի վաղ հավաստիացրել էր իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության գործադիր քարտուղար Ալի Ահմեդովը: Հակառակ դեպքում կարիք չէր զգացվի, որ նախագահի աշխատակազմի ղեկավարն առաջին տիկնոջ անունից հանդես գար նրա կողմից ամուսնու թեկնածությունը պաշտպանելու մասին հայտարարությամբ:

Բայց ինտրիգն այն է, թե ինչո՞ւ դա տեղի ունեցավ այն պահին, երբ Մեհրիբան Ալիեւան գտնվում էր Կաննում: Դեռ մի կողմ ենք թողնում, թե ինչո՞ւ Մեհրիբան Ալիեւան առ այս պահն անձամբ չի հերքել իր մասին տարածված լուրերը: Տպավորությունն այն է, որ Իլհամ Ալիեւը Նովրուզ Մամեդովին իր ընտանիքում «քաղաքական համերաշխության» մասին արտոնել է խոսել՝ օգտագործելով Ադրբեջանից կնոջ բացակայության առիթը:

Իսկ դա իր հերթին նշանակում է, որ Մեհրիբան Ալիեւան պարզապես «աքսորվել է» Կանն, որպեսզի շփումներ չունենա այն անձանց եւ խմբերի հետ, որոնք նախագահի պաշտոնում տեսնում են նրան: Այլ եզրահանգում անհնար է անել:

Տես էջ 2

ՄԵՆՔ ԵՎ ՆՐԱՆՔ

# Աղտակի տեսությունը

Մեկ աղտակը կոչվում է դաստիարակչական, իսկ մի քանի աղտակը՝ ծեծ: Գեորգի Վանյանը ժամանակին Հայաստանում «ադրբեջանական կինոյի փառատոն» էր ցանկանում կազմակերպել, այդպիսով մի քանի ադրբեջանական ֆիլմեր բերել Երեւան: Հայ հասարակությունը՝ կոնկրետ Վանաձորում, այս նախաձեռնության համար Վանյանին ծեծեց՝ պիտակելով նրան՝ «ազգի դավաճան»:

Իսկ «Ոսկե ծիրան» փառատոնին, օրինակ, ոչ ոք «ազգի դավաճան» չի անվանում, չնայած այնտեղ գրեթե ամեն տարի մասնակցում (նաեւ հաղթում են) թուրքական ֆիլմեր՝ Թուրքիայի արտադրությամբ: Ավելին, այս տարվա երեւանյան կինոփառատոնին մասնակցում է գերմանական արտադրության ֆիլմ: Ֆիլմը՝ «Դագաղագործի ճոճանակ», Երեւանում ներ-




կայացնում է նրա գերմանացի պրոդյուսերը, սակայն նա մեր երկրում տվյալ ֆիլմի միակ ներկայացուցիչն է: Ռեժիսորն ու ֆիլմի ստեղծագործական կազմի ներկայացուցիչները Երեւան չեն ժամանել, որովհետեւ նրանք ադրբեջանցի են:

Երիտասարդ Էլմար Իմանովը ֆիլմը նկարահանել է Ադրբեջանում, այն պատմում է ադրբեջանցի հոր եւ նրա մտավոր հետամնաց որդու մասին, հետեւաբար Ադրբեջանում ապրող ադրբեջանցիների մասին, հետեւաբար՝ ադրբեջանական է: «Ոսկե ծիրան»-ին, իհարկե, ոչ ոք չի մեղադրում «ազգի դավաճանության» մեջ, որովհետեւ մենք հանդուրժող հասարակություն ենք: Որովհետեւ մեկ աղտակը դաստիարակչական է, մի քանիսը՝ ծեծ:

Բայց ի՞նչ են կոչվում այն հայաստանցիները, որոնք հուլիսի 9-ին գնացին ու դիտեցին «Դագաղագործի ճոճանակ» ֆիլմը, դավաճաննե՞ր, բայց ինչո՞ւ: Ի՞նչ են նրանք արել, թշնամուն մատնել են պետական գաղտնի՞ք, ասե՞լ են, որ այս զորամասում այս զինվորը այս խրամատում զոհվել է այս զինվորի արձակած կրակոցից: Գուցե նրանք դավաճանել են ազգին, քանի որ կուլ են տվել ադրբեջանական մեդիայի խայծն ու համառորեն չեն ցանկանում լռել մոլդավուհի Աուրելիո Գրիգորիուի երեւանյան արկածների մասին անընդհատ խոսելի՞ս: Ամենեւին: Նրանք պարզապես ֆիլմ են դիտել՝ ադրբեջանցիների մասին պատմող մեկ ֆիլմ, որը նկարահանվել է հենց Ադրբեջանում, որը պատմում է հոր ու նրա՝ մտավոր հետամնաց որդու մասին, որն արժանացել է մի շարք միջազգային մրցանակների, եւ որը մարդկային պատմություն է:

Նրանք ուղղակի ապացուցել են, որ մենք ազգայնամոլ չենք:

Էլմար Իմանովն ու իր կոլեկտիվը Երեւան չեն ժամանել, որովհետեւ մեզ ազգայնամոլ են համարում:

Բայց ադրբեջանական կինոն այսօր Երեւանում է: Իսկ Վանյանին ծեծողները չկան, չեն երեւում, հավանաբար որովհետեւ մեկ ադրբեջանական կինոն այլ բան է, մի քանի ադրբեջանական կինոն՝ բոլորովին այլ, ինչպես աղտակը, ավելի շուտ՝ ծեծը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Իշխանությունը պետք է սահմանազատվի անվստահելի նախաքննությունից

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արտակ Բուդաղյանին մեղադրանք առաջադրելու եւ Սուրիկ Խաչատրյանին՝ Լիցքային տուժող կողմ ճանաչելու միտումը հանդիպել է հասարակության չըմբռնմանը: Միամիտ չթվալու համար կարելի է ենթադրել, որ Բուդաղյանների եւ Խաչատրյանի հարաբերությունների պարզումը հազիվ թե այդքան մակերեսուն եւ միագիծ լիներ, որքան ներկայացվում է՝ որքան էլ զոհված Բուդաղյանը եւ հատկապես հրամանատար Բուդաղյանը վայելեին իրենց շրջանակների սերն ու հարգանքը: Սակայն Հայաստանում գաղտնիք չէ, որ բոլոր տեսակի հարաբերությունների ճշտումը տնտեսական հողի վրա է, այս կամ այն խումբը ինչ-որ բան չկիսելիս կամ միմյանց չզիջելիս զենք եւ բիլակներ է գործի դնում: Ի սկզբանե Գորիսում տեղի ունեցածի բուն պատճառների մասին կողմերը մինչեւ այժմ էլ լռում են, սակայն հասարակության մեջ ստեղծված ստերեոտիպերը՝ բացահայտ հակակրանքը Լիցքայի նկատմամբ (իր իսկ սկանդալային անցյալի պատճառով) եւ համակրանքը զինվորական շրջանակներում իր դրական կերպարով հայտնի Բուդաղյանի հանդեպ չի կարելի անտեսել այն իմաստով, որ այս գործով նախաքննությունն ու դատաքննությունը հարկ է ընթանան հնարավորինս թափանցիկ, բոլորի համար համոզիչ ու տեսանելի:

Տես էջ 3




# Ուկրաինական «Ռոշեն» քաղցրավենիքի որակը մեծ տագնապ է հարուցում Ռուսաստանում, իսկ Հայաստանո՞ւմ...

Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության պետական վերահսկողության ծառայության («Ռոսգունադզոր») պետ Գենադի Օնիշչենկոն «Ինտերֆաքսին» տված հարցազրույցում ասել է, որ Ուկրաինայից Ռուսաստան ներմուծվող քաղցրավենիքի որակը լուրջ տագնապ է հարուցում: «Վերջին ժամանակներս ծառայության շատ ավելի լուրջ մտահոգությունն է առաջացնում Ուկրաինայից Ռուսաստան ներմուծվող հրուշակեղենի որակը: Առաջին հերթին, խնդիրներ է առաջացնում «Ռոշեն» (Roshen) ընկերության արտադրանքը», նշել է նա:

Տեղեկացնենք, որ «Ռոշեն» ընկերության արտադրանքը ներմուծվում եւ վաճառվում է նաեւ Հայաստանում: Ռուսաստանի համապատասխան ծառայության հայտարարությունից հետո ուկրաինական այս ընկերության քաղցրավենիքի որակի վերաբերյալ Հայաստանի սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը որեւէ ասելիք չունի՞, եւ ընդհանրապես վատ չէր լինի, որ այս ծառայությունը գոնե մեկ-մեկ զբաղվեր նաեւ ներմուծվող ապրանքների որակի խնդիրներով, իսկ մեր օտարամոլ սպառողներն էլ տեղեկանային իրենց սիրելի արտադրանքի որակի մասին հնչող մտահոգություններին:

Ա. Ս.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեմում Պերճ Զեյթունցյանի «Հարյուր տարի անց» պիեսի ներկայացման՝ Լեւոն Մութաֆյանի անդրադարձը:

Ալբերտ Իսոյանի վերաբերմունքը Պետրոս Հովհաննիսյանի պատմագիտական ուսումնասիրություններին եւ նրա՝ վերջերս կազմած եւ աշխատասիրած «Մովսես Խորենացի. մատենագիտություն» հատորին:

Երաժշտագետ Մարինե Կարոյանի հանդիպման տպավորությունները Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Էդվարդ Թոփչյանի հետ:

Մոռացված դեմքեր. Իզաբելլա Քալանթար. Բախտիար Հովակիմյանի հրապարակումը:

«Գայանե Խաչատուրյան». պատառիկ Արտեմ Օհանջանյանի հիշողություններից: Եվս մեկ պատառիկ հուշ՝ Կոստան Զարյանի մասին, ամերիկաբնակ Ցոլակ Հովսեփյանի գրառումներից:

Ճապոնական մշակույթի եւ ազգային ավանդույթների շերտերից. թեյախմության արարողության ճապոնական դրսեւորումները: Ներկայացնում է Անի Մագումյանը:

Մ. Բ.

# Ինչո՞ւ է զինդատախազությունը տարբերակված մոտեցում ցուցաբերում

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Զինդատախազության նախաձեռնությամբ կստեղծվի աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի ՀՀ զինված ուժերում արձանագրված մահվան ելքով քրեական գործերը: Աշխատանքային խումբը կուսումնասիրի այն քրեական գործերը, որոնցով ամփոփիչ որոշումները կայացվել են 2011-ի հունվարի 1-ից հետո: Աշխատանքային խմբի ներկայացրած խորհրդատվական եզրակացության հիման վրա կկայացվեն համապատասխան դատավարական որոշումներ: Աշխատանքային խմբի գործունեությանը հրավիրվում են մասնակցելու ՄԻՊ գրասենյակի եւ փաստաբանների պալատի մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաեւ ՀՀ ԶՈՒ հիմնախնդիրներով զբաղվող Հայաստանում առնվազն երեք տարվա գործունեություն իրականացնող իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մինչեւ հուլիսի 15-ը վերոնշյալ կազմակերպությունները կարող են հայտեր ներկայացնել զինվորական դատախազություն:

Զինվորական դատախազության ուղարկած վերոնշյալ հաղորդագրությանը երեկ արձագանքել են մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից եւ հիշեցրել, որ դեռեւս 2 տարի առաջ օմբուդսմենի գրասենյակը ԱԺ-ին առաջարկել էր ստեղծել զինված ուժերում արձանագրված մահվան ելքով քրեական գործերն ուսումնասիրող աշխատանքային խումբ՝ նկատի ունենալով ԱԺ-ի քաղաքական կշիռն ու չեզոքությունը նման բարդ խնդիրների լուծման պարագայում:

«Այն ժամանակ աշխատանքային խմբի մեջ ընդգրկվել էին ԱԺ պատգամավորներ Սամվել Նիկոյանը, Արամ Սաֆարյանը, Հրայր Կարապետյանն ու Լարիսա Ալավերդյանը, իսկ հետագայում նաեւ ապահովվել էր զինվորական դատախազության ներգրավվածությունը: Ցավոք, ԱԺ-ի համապատասխան հանձնախմբի նախաձեռնությունը թողնվեց անավարտ», հայտարարել է Կարեն Անդրեասյանը՝ հավելելով, որ անհասկանալի է, թե ինչո՞ւ է զինդատախազությունը որոշել քննության առարկա դարձնել այն քրեական գործերը, որոնց վերաբերյալ ամփոփիչ որոշում կայացվել է 2011-ի հունվարի 1-ից հետո:

Տես էջ 3

ԱԶԳ

# Ընթացիկ

## Ջավախքի «Ալ Ղաիդան» ու Վրաստանի ՆԳՆ հայազգի պաշտոնյան

Ըստ էության, ուրիշ բան նման հրապարակման մասին ասելու մեծ անհրաժեշտություն էլ չկա, մեջբերումներ անելու էլ, քանի որ ինչպես հարցազրույց վերցնողը, այնպես էլ տվողը անում են այնպիսի հակաօրինական քայլեր, ինչպիսիք Վահագն Չախալյանին մեղսագրվող «դավաճանությունն ու լրտեսությունն են», որպիսի մեղադրանքներ վրացական դատարանում ոչ մեկը չի ներկայացրել, երբ Չախալյանին դատում են՝ վրաց արդարադատության խախտումնաշատ ողջ ընթացակարգին համապատասխան:

Ոմն Կարինա Գրիգորյանը հարցազրույցում այնպիսի կեցվածքով է հանդես եկել, կարծես ամենատեղյակն է Չախալյանի գործից, ընդ որում, ի հայտ է բերել այնպիսի հանգամանքներ, որոնք անգամ դատավարության ողջ ընթացքում, ստացվում է, «վրիպել» էին մեղադրական կողմի աչքերից: Մասնավորապես, պարզվում է, Չախալյանի ղեկավարած հասարակական կազմակերպության անունից զինված հանցախումբ է իբր գործել: Ասել է թե վրացական ներքին գործերին քաջատեղյակ տիկնոջ իմացությունն ավելին է, ու որքան էլ տարօրինակ թվա, իրավաբանի պարագայում ենթադրությունները ներկայացվել են որպես փաստեր:

Տիկինը պնդում է նաեւ, թե «Միասնական Ջավախքի» ակտիվիստներից Գուրգեն Շիրինյանն է մեղավոր 2008-ի բախումներից մեկի ժամանակ տեղացի ոստիկանի սպանության գործում այն դեպքում, երբ, նախ, բոլոր փաստերը վկայում են Շիրինյանի՝ այդ սպանությանը առնչություն չունենալու մասին, ոստիկանի սպանության հանգամանքներն էլ տարբեր ցուցմունքներում տարբեր էին ներկայացվել: Ամեն դեպքում, իր նախորդ ասածները հիմնավորելու համար, թե Չախալյանի ղեկավարած կազմակերպությունը զինված էր, տիկինը հենց այս իրադարձությունն է նշում, երբ հենց Չախալյանի գործով առգրավվել էին մի քանի զինատեսակներ՝ յուրաքանչյուրը Չախալյանի՝ արդեն իսկ կալանավորված լինելու պարագայում դեռեւս հատուկջոկատայիններին էր «սպասել» Չախալյանների տան դռնակների տակ:

Անհեթեթությունը հաստատ կարող է սահմաններ չճանաչել, ինչպես նաեւ, ցավոք, սահմաններ չեն ճանաչում Վրաստանում որեւէ նշանակալի դիրքի հասած որոշ հայերի՝ «այսքան գիտակ» հայտարարությունները, ինչպիսիք արել է նաեւ Կարինա Գրիգորյանը, որպես իրավաբան Վրաստանի առջեւ իր պարտքը կատարելով նաեւ հայտարարությամբ, թե Չախալյանի դեմ գործի նյութերին կարող է ծանոթանալ յուրաքանչյուրը: «Ազգը» հետեւել է Չախալյանի դատավարության ողջ ընթացքին, ու եթե անգամ մի կողմ դնենք ներկայացված մեղադրանքներում նրա մեղավոր լինել-չլինելու հարցը, ապա փողոցային առեւտուր հիշեցնող դատավարության ընթացքում թույլ տրված խախտումներն ու մեղադրյալի գրեթե բոլոր իրավունքների ոտնահարումները բավարար են, որ նորմալ իրավաբանն այդ գործի մասին ուղղակի չխոսի:

Միեւնույն ժամանակ, խելացի ներկայանալու փորձեր անող այս տիկինը թերեւս վրիպել է՝ հարցազրույցում ներկայացնելով մի հետաքրքրական միտք, թե Չախալյանը հեղինակություն էր վայելում, ու «Ջավախքում բախումնային իրավիճակը հանդարտվեց, երբ Չախալյանին ձերբակալեցին»: Ասել է թե՝ ոչ թե կային հիմքեր ձերբակալելու, այլ Ջավախքում իրավիճակը հաղթահարելու վրացական իշխանությունների միակ լուծումը եղավ նրա ձերբակալությունը: Ասվածը տիկինն ապացուցում է նաեւ իր մյուս խոսքերով, թե իբր Չախալյանը ինքնավարության կոչեր էր անում, որոնք հանդարտվեցին կրկին նրան ազատազրկելուց հետո:

Ընդհանուր առմամբ, այնպիսի տպավորություն կարելի է ունենալ հարցազրույցից, թե տիկին Կարինան ծպտյալ Միխեիլ Սաակաշվիլին է, քանի որ որոշ խոսքեր ուղղակի կրկնություն են այն ամենի, ինչ ի դեմս Սաակաշվիլու, բազմիցս Չախալյանի դեմ հայտարարել են վրացական իշխանությունները:

«Կարծում եմ՝ նա գործել է հանձնարարությամբ. հայտնի է, որ «Միասնական Ջավախք» կազմակերպությանը լրջորեն ֆինանսավորում էր Ռուսաստանը», դատողությունների այսպիսի հակասական մոտեցմամբ է իր մտքերը ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանի ու նրա ղեկավարած կազմակերպության մասին ներկայացրել ազգությամբ հայ, Վրաստանի ՆԳՆ երկար տարիների աշխատակից, անգամ Պատվո շքանշանակիր, ոնց որ թե նաեւ իրավաբան, ջավախքցի ներկայացող ոմն Կարինա Գրիգորյան, որին պեղել ու հանրության առաջ Ջավախքի մասին դատողություններ անելու հնարավորություն է տվել «Գրուզիա օնլայն» կայքէջը երեկվա իր հրապարակումների շարքում որպես հարցազրույց՝ «Անջատողականությունը կարող է վերադառնալ» վերտառությամբ:

Մի մեջբերում հարցազրույցից, որը թերեւս մեկնաբանության կարիք չունի. «Մոսկվան միշտ էլ աջակցել է Ջավախքի հայ բնակչության անջատողական տրամադրություններին... «Միասնական Ջավախքի» ակտիվ աջակցությամբ Ջավախքում օգտագործվում էր ռուսական ռուբլին... օգտագործվում էր ռուսերեն լեզուն... Նման իրավիճակներում իրավապահները արձագանքում են, բայց քանի որ «Ջավախք» կազմակերպությունը լուրջ աշխատում էր բնակչության հետ ու լարում իրավիճակը, վրաց իրավապահները սրման չէին գնում... Տարածաշրջանի վրա Վրաստանի իրավասությունը փաստացի չէր տարածվում»:

Վերը նշված մտքերը վրաց իշխանավորները ժամանակին եւ այսօր էլ որոշ իշխանավորիկներ այնքան են կրկնել, որ կարելի է անգիր շարել իրար կողքի՝ վրացական իշխանությունների վերաբերմունքը Ջավախքի հանդեպ բնութագրելու համար: Այսպես որ տպավորությունը հիմքեր է ձեռք բերում հանգեցնելու, թե Կարինա Գրիգորյանն ավելի շուտ հենց ինքը՝ Սաակաշվիլին է կամ էլ նրա դասերը լավ է սերտել, հատկապես որ տիկին Գրիգորյանը հետագա իրադարձությունների մեկնաբանության հարցում էլ գրեթե բառ առ բառ կրկնում է իշխանական տեսակետները:

Ի մասնավորի, նրա խոսքերով էլ, ստացվում է, թե հենց Չախալյանին ազատազրկեցին, «տարածաշրջանի ոստիկանությունն ու պետական հաստատությունները սկսեցին լիարժեք գործել, առեւտուր սկսեցին անել վրացական տարադրամով, բնակչությունը հանդարտվեց, իշխանությունները նոր ծրագրեր սկսեցին իրականացնել, ճանապարհ սկսեցին կառուցել»: Առնվազն տարօրինակ է մնում այն հանգամանքը, որ, վրացական իշխանությունների գնահատականներով ու տիկին Կարինայի խոսքերով՝ Չախալյանը մինի «Ալ Ղաիդա» է ունեցել Ջավախքում, ուղղակի երեւի այդ մասին ինքն էլ գլխի չի ընկել:

Մեկ բան հաստատ է, հայը, որ ապրում է Վրաստանում ու որեւէ պարագայում հայտարարում, թե Ջավախքի հայ բնակչության իրավունքների ոտնահարում չի եղել, լավագույն հետեւորդն է «որտեղ հաց, այնտեղ կաց» ոչ այնքան լավ բնութագրական հիշեցնող խոսքերի, կամ, որ ավելի հավանական է, հնարավորությունների աստիճաններով ավելի վերեւ սողալու մեծ ցանկություն ունի;

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԸՆԴՀԱՏԱԿԻՑ ԿԱՄ ՀԱՏԱԿԻՑ

## Ստախոսը նորից ի հայտ է եկել

Վերջին օրերին որոշ լրատվամիջոցների եւ վեբ-կայքերի ուշադրության կենտրոնում նորից է հայտնվել ՀՌԱԿ նախկին ատենապետ Հարություն Առաքելյանը, որը շարունակում է կեղծ ու սուտ լուրեր տարածել Ռամկավար ազատական կուսակցության մասին: Հիշեցնենք, որ Հ. Առաքելյանը վաճառել էր կուսակցությանը պատկանող անշարժ գույքը (սեփականության իրավունքով ՀՌԱԿ-ին պատկանող 6 գրասենյակներից 5-ը) եւ յուրացնելով այդ գումարները՝ դիմել փախուստի: Այս գործը հնարավոր եղավ բացահայտել միայն կուսակցության անդամների եւ այնուհետեւ համագումարի պատգամավորների հետաքննության արդյունքում, երբ վերջիններս համապատասխան հայցով դիմեցին դատախազություն: Քրեական պատասխանատվությունից խույս տալու համար Առաքելյանը վարկաբեկիչ նամակներ էր գրում տարբեր պետական պաշտոնյաների, այդ թվում՝ վարչապետի անունով՝ փորձելով իր հանցագործությանը «քաղաքական» երանգ հաղորդել: Սակայն կեղծ լուրեր տարածելու Հ. Առաքելյանի սովորությունը չի դադարում, եւ այժմ էլ պնդում է, թե իբր Չեխիայում քաղաքական ապաստան է ստացել, ինչը իրականության հետ ոչ մի աղերս չունի:

## Սալիկապատվում են Երեւանի փողոցների մայթերը



Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, Երեւանի քաղաքապետարանի 2013 թվականի ծրագրով մայթերի վերանորոգման աշխատանքներ են նախատեսվել մայրաքաղաքի Աբովյան, Արամի, Իսահակյան, Ալեք Մանուկյան, Չարենցի, Տերյան, Ամիրյան, Կորյունի, Սարյան, Խորենացու, Թումանյան փողոցներում, Մաշտոցի եւ Սայաթ-Նովայի պողոտաներում եւ Դավթաշենի այգում: 12550 քմ մակերեսով մայթեր արդեն իսկ վերանորոգվել են, տեղադրվել են բետոնե նոր սալիկներ, որոշ հատվածներում վերատեղադրվել ու ամրացվել են նախկին սալիկները: Ամբողջությամբ փոխվել են նաեւ Շառլ Ազնավուրի անվան հրապարակի սալիկները՝ 2650 քմ մակերեսով: Տեղադրման համար օգտագործվում են 6 սմ հաստությամբ բետոնե սալիկներ, որոնց որակը պարտադիր պետք է բավարարի մրցույթով սահմանված տեխնիկական պահանջները:

Տեղեկացվում է, որ մայթերի ու հրապարակների սալիկապատման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականի 3-րդ եռամսյակում:

Ա. Ս.

## Մայր աթոռում ստեղծվել է եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակ

Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում ստեղծվել է եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակ: Հուլիսի 10-ից հայրապետական տնօրինությամբ եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն է նշանակվել Հայ եկեղեցու Կանադայի թեմի նախկին առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

## Մեհրիբանին կարծես «աքսորել են»

*1-ին էջից*

Մանավանդ որ Իլհամ Ալիեւն իր հարազատներին քաղաքական-հանրային կյանքից մեկուսացնելու չափազանց հարուստ փորձ ունի:

Այսպես, ոչ ոքի համար այլեւս գաղտնիք չէ, որ Հեյդար Ալիեւի դուստրը՝ Սեւիլը, Ադրբեջանում անցանկալի անձ է: Նրան արգելված է անգամ կարճաժամկետ գտնվել Բաքվում: Սեւիլ Ալիեւային նույնիսկ հնարավորություն չի տրվել, որ ներկա գտնվի հոր 90-ամյակի տոնակատարություններին: Ըստ որոշ աղբյուրների՝ Ադրբեջանի հատուկ ծառայությունները Լոնդոնում ուշիուշով վերահսկում են Սեւիլ Ալիեւայի յուրաքանչյուր քայլ:



2008թ.-ից տնային կալանքի տակ է գտնվում Իլհամ Ալիեւի հորեղբայրը՝ակադեմիկոս Ջալալ Ալիեւը, որին կարգադրված է «չհեռանալ մերձքաղաքային ամառանոցից, զբաղվել ծաղկաբուծությամբ»: Վերջերս լրացավ Ջալալ Ալիեւի 85-ամյակը, սակայն նա ոչ միայն որեւէ պետական պարգեւի, այլեւ անգամ շնորհավորական ուղերձի չարժանացավ, ինչը եւս վկայում է, որ Իլհամ Ալիեւը լիովին «մոռացել է» հորեղբոր գոյությունը:

Այս փաստերի եւ ադրբեջանական մամուլում Մեհրիբան Ալիեւային տեղեկատվական շրջափակման ենթարկելու ակնհայտ դրսեւորումների համադրությամբ կարելի է թերեւս կարծիք հայտնել, որ Իլհամ Ալիեւը որոշել է առնվազն մինչեւ նախագահի թեկնածուների պաշտոնական գրանցման պահը կնոջը պահել «աքսորում»: Այլ խնդիր է, թե դա որքանով կհաջողվի կամ Մեհրիբանը կունենա՞ շրջափակումը ճեղքելու եւ իր մասին հիշեցնելու ցանկություն:

Վ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

*1-ին էջից*

Անդրեասյանը հիշեցրել է, որ այսօր առկա են բազմաթիվ բողոքներ դեռեւս 2011-ին տեղի ունեցած մահվան դեպքերի քննության վերաբերյալ: Այդ դեպքերի քննությունն ընթացել է էական բացթողումներով, իսկ քննության արդյունքների նկատմամբ զոհերի հարազատների եւ հանրության վստահությունն անբավարար է:

Պաշտպանի գնահատմամբ՝ միայն նախկին, նույնիսկ 10-ամյա հնության գործերի լրիվ եւ օբյեկտիվ քննությունն ու այդ գործերով արդարադատության վերականգնումը կարող է ապահովել տոնական վարկածը, մահվան վերաբերյալ ծնողի վարկածը, գործի քննության ներկայիս փուլն ու քննության ընթացքի խախտումներն ու թերացումները: ՄԻՊ գրասենյակի հաղորդմամբ՝ նախաքննության փուլում գրանցված խախտումները շատ են: Օրինակ՝ Արայիկ Ավետիսյանի գլխի վրա, բացի հրազենային վնասվածքներից, եղել են այլ վնասվածքներ, իսկ վարույթն իրականացնող մարմինը չի պարզել պատճառները: Գեղամ Սարգսյանի մահվան գործով քննիչը փորձագետին է ուղարկել 3 ռենտգեն լուսանկար, որոնց դատաբժշկական գիտագործնական դիակի նկարները փաստում են աչքի, ծնոտի եւ գլխի հատվածներում առկա վնասվածքները, ձեռքի ափին կապտուկները, սակայն դատաբժիշկն այդ ամենը չի արձանագրել:

Այս ու մի շարք այլ փաստեր ուղարկվել են զինդատախազություն: Հետագայում կայացավ նաեւ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, զինդատախազ Գեւորգ Կոստանյանի եւ ՄԻՊ Կարեն Անդրեասյանի հանդիպումը, եւ որոշվեց քննել այս գործերն ու բացահայտել դրանք:

Տարօրինակ է, որ երկու տարի լռելուց հետո զինդատախազությունը

## Ինչո՞ւ է զինդատախազությունը տարբերակված մոտեցում ցուցաբերում

այսօրվա մահվան դեպքերի քննության նկատմամբ վստահությունն ու վաղվա բռնությունների եւ սպանությունների կանխարգելումը: Պաշտպանի գրասենյակից հայտարարել են, որ կընդգրկվեն խմբում, եթե ուսումնասիրվեն քրեական այն գործերը. որոնց վերաբերյալ ամփոփիչ որոշում կայացվել է 2001-ի հունվարի 1-ից հետո, աշխատանքային խմբի գործունեության ձեւաչափը եւ աշխատակարգը պետք է որոշի խումբն ու հստակեցվի, թե ինչ իրավական հետեւանք են ունենալու աշխատանքային խմբի կայացված որոշումները:

Դեռեւս 2 տարի առաջ «Ազգ»-ն անդրադարձել էր վերոնշյալ փակ լսումներին, որոնց մասնակցել էին խաղաղ պայմաններում զոհված զինվորների ծնողները, ԱԺ պատգամավորներն ու ՄԻՊ Կարեն Անդրեասյանը:

Պաշտպանի աշխատակազմը զոհվածների ծնողների հետ կազմել էր 8 տեղեկանք, որոնք ներառում էին զինծառայողի մահվան պաշտոնական վարկածը կենտրոնում եւ նախաքննության ընթացքում անդրադարձ չի կատարվել: Նարեկ Գալստյանի մահվան դեպքի վայրից ոչնչացվել են իրեղեն ապացույցներ: Տիգրան Համբարձումյանի դին գտնվել է զորամասից մի քանի մետր հեռու, տեսանելի վայրում, սակայն սպայական կազմը մարմինը հայտնաբերել է դեպքից մեկ օր անց: Անդրանիկ Սարգսյանի մահվան գործով բուժծառայության պետն իր բացատրությունում նշում է, որ սխալ ախտորոշում է իրականացրել, մինչդեռ նախաքննության մարմինն այդ հարցին չի անդրադարձել: Քննիչն արձանագրել է, որ սպանված Արման Հակոբյանին նաեւ ծեծել են, սակայն քայլեր չի ձեռնարկել ծեծած զինծառայողներին որպես մեղադրյալների ներգրավելու: Պարանին, որով կախվել է Վալերիկ Մուրադյանը, եղել են արյան հետքեր, սակայն պարանը չի ուղարկվել փորձաքննության՝ արյան կարգն ու պատկանելությունը որոշելու: Սպանված Տիգրան Օհանջանյանի որոշում է նման աշխատանքային խումբ ստեղծել, սակայն չուսումնասիրել այն քրեական գործերը, որոնց բացահայտման փուլում եղել են ակնհայտ խախտումներ եւ թերացումներ, եւ որոնք ազդեցություն են ունեցել ամփոփիչ որոշման վրա: Զինդատախազության կողմից սա դիտարկվում է որպես տարբերակված մոտեցում եւ եթե լուրջ պատճառներ ու հակափաստարկներ չկան բացատրելու, թե ինչու չեն ցանկանում ուսումնասիրել այն քրեական գործերը, որոնց վերաբերյալ ամփոփիչ որոշում կայացվել է 2001-ի հունվարի 1-ից հետո, ապա տպավորություն է ստեղծվում, որ վերոնշյալ գերատեսչությունում ցանկանում են այդ սպանությունները կոծկել եւ իրական մեղավորներին պաշտպանել: Ի վերջո, եթե զինդատախազության նպատակը արդարադատություն հաստատելն ու մեղավորներին պատժելն է, ապա թող բացահայտվեն բոլոր գործերն ու պատժվեն բոլոր այն անձիք, ովքեր զինվոր են սպանել կամ դրդել նրանց ինքնասպանության:

## Վերապատրաստումները որպես Երեւանի «Գլաձոր» համալսարանում որակի մշակույթի տարածման միջոց

«Գլաձոր» համալսարանը «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրանց հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրում» ծրագրի շրջանակներում իր դասախոսական կազմի եւ ուսանողների շրջանում անցկացնում է վերապատրաստումներ: Համալսարանի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Հասմիկ Վարդանյանի տեղեկացմամբ, մինչ օրս համալսարանում անցկացվել են 3 վերապատրաստումներ, որոնց նպատակը բուհում որակի մշակույթի տարածումն է, մասնավորապես, ներքին շահակիցների շրջանում տեղեկացվածության աստիճանի բարձրացումը եւ ձգտումը, որպեսզի նրանք դառնան այդ որակի մշակույթի կրողը, գիտակցեն իրենց դերն այդ գործընթացներում:

Ըստ Հ. Վարդանյանի, առաջին վերապատրաստումը նվիրված էր որակի ապահովման համակարգի բարելավմանը, այդ համակարգում ներգրավված ներքին շահակիցների դերերի պարզաբանմանը, նրանց պարտականությունների եւ իրենց կողմից իրականացվող անհրաժեշտ գործողությունների շրջանակը:

Երկրորդ վերապատրաստումը նվիրված էր դասախոսական կազմի որակի ապահովմանը: Վերապատրաստմանը ներգրավված էին համալսարանի պրոֆեսորադասախոսական եւ վարչական կազմի ներկայացուցիչներ: Նպատակը համակարգում իրականացվող գործընթացների համապատասխանեցումն էր եվրոպական չափանիշներին եւ ուղենիշներին:

Երրորդ վերապատրաստումը վերաբերում էր ուսանողների գնահատման համակարգին: Վերապատրաստման թիրախային խումբն ուսանողներն ու համալսարանի վարչական աշխատակազմն էր: Վերապատրաստման ընթացքում ներկայացվեց ոլորտում առկա առաջավոր փորձը, դրա տեղայնացման հնարավորությունները համալսարանում:

Հաջորդ վերապատրաստումը ուղղված է լինելու մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, վերանայման եւ մշտադիտարկման բարելավմանը:

Ինչպես տեղեկացրեց Հ. Վարդանյանը, վերապատրաստումների արդյունավետությունը գնահատելու հարցում կիրառվում են համապատասխան մեխանիզմներ, հարցաթերթի օգնությամբ փորձ է արվում պարզել վերապատրաստումների կարեւորությունը եւ ստանալ մասնակիցների գնահատականը: Վերապատրաստվողները հնարավորություն են ունենում նաեւ ներկայացնել իրենց առաջարկները ինչպես տվյալ վերապատրաստման կազմակերպվածության, այնպես էլ հաջորդ վերապատրաստումների բարելավման ուղղությամբ:

«Այս ծրագրի շրջանակներում անցկացվող վերապատրաստումների հիմնական նպատակը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ շրջանավարտ պատրաստելն է, իսկ անցկացվող վերապատրաստումները կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլեր են, որոնք ուղղակիորեն նպաստում են այդ նպատակի իրականացմանը»,- նշեց Գլաձոր» համալսարանի Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

## Իշխանությունը պետք է սահմանազատվի անվստահելի նախաքննությունից

*1-ին էջից*

**Ու հիմա գլխավոր խնդիրն իշխանության համար պետք է լինի ոչ թե իր համար տարբեր ծառայություններ մատուցած Լիցկայի դեմքն ու պատիվն փրկելը, այլ բարձր որակի արդարադատության իրականացումն ու այդպիսով իշխանության հանդեպ հասարակության մեջ վստահության ներշնչումը գոնե այս գործով: Հաստատ Լիցկայի հովանավորությունը սեփական վստահության կորստով հարկավոր չէ իշխանությանը: Համենայն դեպս՝ հովանավորության վերաբերյալ մտքերը ծնվում են Սուրիկ Խաչատրյանի հետ իշխանական կայքերի հարցազրույցների ինքնարդարացման շեշտադրության առկայությամբ եւ բուն նախաքննություն իրականացնող մարմինի քայլերի հերթագայությունից:**

**Արտակ Բուղաղյանին միակողմանի կերպով մեղադրանքի առաջադրումը բազմաթիվ պրոբլեմների առաջ կանգնած իշխանության հանդեպ անբարյացակամության մի հավելյալ դրսեւորում դառնալու վտանգն ունի իր մեջ: Ու որեւէ անձ, ով էլ նա լինի, ինչ ծառայություններ էլ մատուցած լինի իշխանությանը, չարժե այն բանին, որ իշխանությունը սեփական հասարակության աչքում անվստահելի լինելու նոր առիթներ ունենա: Քանզի գործի քննությանը հետեւող ու թեկուզ իրավաբանությունից շատ հեռու մարդն անգամ ակնհայտ հակասություններ է նկատում տեղի ունեցողում՝ սկսած զինդատախազի անհարկի մեկնաբանություններից հենց դեպքից անմիջապես հետո, Լիցկայի տան մոտ տեղի ունեցածի ընտրովի մատուցումով հասարակությանը՝ մոնտաժված տեսանյութով, Լիցկայի տնից առգրավված զենքի փաստաթղթավորված լինելու մասին հաղորդագրության տարածման շտապողականությամբ, թեեւ դա եւս կարծես նախաքննության գաղտնիք կարող էր լինել: Տպավորություն կա, որ թեեւ նախաքննությունը չի ավարտվել, սակայն ամեն ինչ արվում է Լիցկային եւ իր ընտանիքին պաշտպանվող կողմ ներկայացնելու համար, երբ ի վերջո ոչ ոք իրականում (բացի նախաքննական մարմնից եւ տեսանյութի տերերից) չգիտի, թե ինչ է եղել չմոնտաժված տեսանյութում, կամ ոչ ոք չի ասում վեճի իրական պատճառները, դրանք խնամքով թաքցնում են հենց կողմ ընտանիքները: Թեեւ ամեն ինչ մատնացույց է անում մի ինչ-որ շատ մեծ պատճառ: Հանրության համար էլ գոնե էմոցիայի մակարդակով անընդունելի էր Արտակ Բուղաղյանի դեմ քրեական գործի հարուցումը, երբ առաջին հայացքից նա ակնհայտ տուժող է թվում:**

**Իհարկե, նախաքննական մարմնի դեր ոչ ոք չի կարող ստանձնել (մենք եւս հեռու ենք այդպիսի մտքերից), բայց հանրությունն էլ իրավունք ունի չվստահելու այնպիսի նախաքննական մարմնի, որն ի սկզբանե կողմնակալ հայտարարություններ է անում:**

**Այս իրավիճակում, երբ վստահության զրոյական մակարդակ է նախաքննական մարմնի՝ զինդատախազության հանդեպ, երբ իշխանությունը կարող է նույնացվել սկանդալային անցյալով նախկին մարզպետի եւ իրավական անարդարության հետ, իշխանությունը լավ կլինի, որ սահմանազատվի արդեն իսկ անվստահության շղարշը կրող նախաքննական ներկա մարմնից եւ գործի քննությունը փոխանցվի դատախազությանն ու հատուկ քննչական ծառայությանը: Ի վերջո հազար Լիցկա լինի՝ իշխանության համար ամենակարեւորը հիմա սեփական վարկն է, սեփական հասարակության աչքում բացասական կերպարներից սահմանազատվելու կամքը:**

## Արտակ Բուղաղյանի զենքում փամփուշտ չի եղել

**Այս տեղեկությունը երեկ հաստատեց Արտակ Բուղաղյանի փաստաբան Հայկ Ալումյանը՝ հավելելով, որ գնդապետի զենքը միջադեպի օրն ամբողջությամբ հավաքված չի եղել, եղել է տեխնիկապես ոչ պատրաստ վիճակում, եւ նա չէր կարող կրակել: Դեպքից հետո Բուղաղյանի զենքի մեջ փամփուշտներ չեն հայտնաբերվել:**

**«Հետեւաբար, Արտակ Բուղաղյանը չէր կարող կրակել», ասաց Ալումյանը՝ հավելելով, որ իր նշած փաստերն արդեն առկա են քրեական գործում:**

**Հ. Հ.**

VIVACELL MTS

## Անսահմանափակ զանգեր դեպի «Հատուկ համար» ընդամենը 10 դրամով

**Այսուհետեւ «Ալո մենք» սակագնային պլանի բաժանորդները, որպես «Հատուկ համար» ՎիվաՍել-ՄՏՍ-ի հեռախոսահամար ընտրելու դեպքում, կարող են անսահմանափակ խոսել տվյալ բաժանորդի հետ՝ ամբողջ օրվա համար վճարելով ընդամենը 10 դրամ: Ի դեպ, 10 դրամը կգանձվի միայն այն օրերին, երբ բաժանորդն առնվազն մեկ անգամ զանգահարի «Հատուկ համարին»:**

### Դեպի «Հատուկ համար» զանգահարելու պայմաններ

| «Հատուկ համար» | Զանգի արժեք |
|---|---|
| ՎիվաՍել-ՄՏՍ-ի հեռախոսահամարներ | 10 դրամ ամբողջ օրվա համար |
| ՀՀ այլ եւ 374 97 բջջային ցանցերի հեռախոսահամարներ | 36 դրամ/րոպե |
| Երեւանի քաղաքային ցանցերի հեռախոսահամարներ | 36 դրամ/րոպե |

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mt.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

# Թույլ չտալ առճակատում կողմնորոշումների միջեւ

***Այս վերլուծականը գրելու առիթը վերջին օրերին հայաստանյան ԶԼՄ-ներում աշխուժացած քննարկումներն են Հայաստանի ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ: Թվում էր, թե հուլիսի 10-ին Հայաստանի քաղաքական-հասարակական ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ եվրոպական ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով ԵՄ կոմիսար Շտեֆան Ֆյուլեի հայտարարությունը, թե Եվրոպան կաջակցի Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերություններին եւ «մեր կողմից միայն կխրախուսվի Ռուսաստանի հետ համագործակցության շարունակությունը, որը դուք կարեւոր եք համարում, եւ համապատասխան ձեր ազգային շահերին ու անվտանգությանը: Մենք ինքներս կփնտրենք միջոցներ, որպեսզի դուք կարողանաք դա անել եւ վայելել այդ կապերն ու հարաբերությունները, հարցականի տակ չդնելով ԵՄ առջեւ ստանձնած որեւէ պարտավորություն»,- վերջակետ է դնում առճակատման վերածվել սկսող հասարակական բանավեճը, թե ո՞րն է Հայաստանի լավագույն ապագան ինտեգրման առումով: Հակառակ այս իրողությանը, իրականում ծավալվող բազմաթիվ քննարկումներում, տարբեր հարթակների վրա, հասարակությանը հուզող այս կարեւոր հարցում ամփոփիչ եւ կասկածները փարատող եզրակացություններ դեռեւս չեն շտապում արվել: Ավելին, շրջանառվում են զանազան դատողություններ, որոնք պարզ թյուրիմացության արդյունք են, եւ իրավիճակը պարզելու փոխարեն լրացուցիչ անհանգստությունների եւ պարզաբանումների պատճառ են դառնում: Ստորեւ փորձենք վերլուծել այս իրավիճակը, հասկանալու համար, թե ի՞նչ ենք ակնկալում եւ ի՞նչ նոր զարգացումներ ենք սպասում:***

## Արժեքային համակարգի հարցը եւ մեր սպասելիքը

Հիմա շատ են սիրում ասել, թե Հայաստանը իր արժեքային համակարգով ցանկանում է դառնալ եվրոպական երկիր, իսկ տնտեսական եւ անվտանգության հարցերում ձգտում է խորացնել համագործակցությունը Ռուսաստանի եւ նրա դաշնակիցների հետ: Սրանով, ասես, տարբերություն է դրվում եվրոպական եւ եվրասիական ինտեգրման գործընթացների միջեւ, կարծես թե մեր նախապատվությունները մի դեպքում մեկ առավելությունից, մյուս դեպքում այլ առավելությունից օգտվելն է: Այս դատողությունը, անկեղծ ասած, նաեւ մի անհաջող փորձ է հիմնավորելու «ոչ թե կամ-կամ-ի, այլ եւ-եւ-ի» քաղաքական դիրքորոշումը:

Այն, որ ինտեգրացիոն գործընթացներում մենք հետեւողականորեն պետք է հանդես գանք եվրոպական եւ եվրասիական գործընթացների միջեւ հակասություն չտեսնելու եւ չստեղծելու դիրքերից, միանգամայն ճիշտ է եւ հարգանքի արժանի: Բայց դրա համար պետք չէ սխալներ թույլ տալ հիմնավորող փաստարկների մակարդակում: Ասածս հաստատելու համար բերեմ պարզ օրինակ: Վերջին քսանամյակում ձեւավորվել է միասնական իրավական դաշտ՝ Լիսաբոնից եւ Դուբլինից մինչեւ Վլադիվոստոկ: Այդ միասնական դաշտի, այդ թվում՝ ժողովրդավարության խնդիրների եւ մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչների քննարկման եւ մշակման հարթակը Եվրոպայի խորհուրդն է: Համաեվրոպական այդ իրավական կառույցի անդամներն են Ռուսաստանը եւ հետխորհրդային տարածքի եվրոպական մասի պետությունները: Այսպիսով, մեր իրավական արժեհամակարգը մեկն է Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ: Հայաստանը եւ Ռուսաստանը Եվրոպայի խորհրդի լիարժեք անդամներ են, կատարել եւ կատարում են նրա որոշումները: Դրա համար չարժե եվրոպական չափանիշներն ու չափորոշիչները հակադրել Ռուսաստանին եւ նրա դաշնակիցներին: Դրանով ասես ակնարկելով, թե Եվրոպայում մի ընդօրինակության արժանի արժեհամակարգ է, իսկ Ռուսաստանում՝ այլ: Իրականում, դա այդպես կարող էր լինել Խորհրդային Միության փլուզման պահին, կամ դրանից հետո առաջին տարիներին: Բայց հիմա դա արդեն բոլորովին էլ այդպես չէ եւ այդ դատողությունից նավթալինի հոտ է գալիս: Կամ հայտնի է, որ տարածաշրջանային անվտանգության, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պաշտպանության քաղաքական հարթակը Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունն է, որի իրավասության տարածքը ձգվում է կանադական Վանկուվեր քաղաքից մինչեւ Վլադիվոստոկ: Այս կազմակերպության մեջ են արդեն քսան տարի ի վեր լիարժեք անդամներ Ռուսաստանը եւ նրա ռազմաքաղաքական դաշնակիցները ՀԱՊԿ-ի գծով: Այս ամբողջ տարածքը եւ նրանում ընթացող զանազան քաղաքական գործընթացները գործնականում թափանցիկ են միջազգային դիտարկումների եւ գնահատումների համար: Սա պարզ իրողություն է եւ ասել, թե ռուսական արժեհամակարգը ինչ-որ անհամատեղելիություն ունի Արեւմուտքի համակարգի հետ՝ նույնպես առնվազն մոլորություն է:

Մենք պետք է հասկանանք մի պարզ իրողություն. աշխարհը դառնում է ավելի ու ավելի բազմակենտրոն եւ համաշխարհային տնտեսական ու դրանից բխող քաղաքական զարգացումների տրամաբանությունը թելադրում է տարածաշրջանային տնտեսական միավորումների ստեղծում: Սրա նպատակը մեկն է. համաշխարհային մրցակցության մեջ գտնել ազգային տնտեսությունների զարգացման լավագույն մեխանիզմը: Այդպիսի տարածաշրջանային տնտեսական միավորումներ ձեւավորման փուլում են ամբողջ աշխարհում: Ռուսաստանը, Բելառուսը եւ Ղազախստանը ստեղծել են Մաքսային միություն, որը 2015 թ. հունվարի 1-ին կվերաճի Եվրասիական միության: Սա Ռուսաստանի շուրջը համախմբված պետությունների տարածաշրջանային տնտեսական միավորում է լինելու: Այս տնտեսական միավորմանը Հայաստանի մասնակցության օպտիմալ տարբերակի փնտրտուքն է, որ ընթանում է այսօր մեր հասարակական քաղաքական կարծիքում: Եվ ասել, թե մենք դրանով հեռանում ենք եվրոպական արժեքներից եւ հակադրվում ենք դրանց, ուղղակի ճիշտ չէ: Հիշեցնենք, որ հենց մեր օրերում ազատ առեւտրի մեծ շուկա են ձեւավորում Եվրոպական միությունը, ԱՄՆ-ն ու Կանադան: Եվ սա աշխարհայացքային ընդհանրության վրա հիմնված ամենամեծ շուկան է լինելու, որի գլխավոր նպատակը գլոբալ մրցակցության մեջ Չինաստանի աճող տնտեսական ազդեցությանը դիմակայելն է լինելու: Այս տնտեսական իրողության վրա են կառուցված պետությունների քաղաքական մոտեցումներն ու դիրքորոշումները: Այսպիսով, սա տնտեսության զարգացում ապահովելուն ուղղված քայլեր են եւ ընդամենը: Ուրեմն, մեր վերաբերմունքն էլ այս գործընթացներին պետք է ունենա պատշաճ տնտեսական հիմնավորում:

## Մենք խոսում ենք Հայաստանի եւ հայաստանցիների մասին

Մեր մեջ սրված մեկ այլ մտայնությունն էլ այն է, որ փորձելով իրար հակադրել եվրոպական եւ եվրասիական ինտեգրման գործընթացները, մերոնք փորձում ենք դա հիմնավորել ըստ էության պարզունակ փաստարկներով, թե որտեղ է ավելի լավ՝ Եվրոպայում, թե հետխորհրդային տարածքում: Սկսում են հիշել, որ եվրոպական սոցիալական ապահովության եւ կենսամակարդակի չափանիշներն ավելի բարձր են: Դրա հակառակորդներն էլ ասում են, որ Ռուսաստանը օրեցօր զարգացող եւ հարստացող պետություն է, հսկա բնական պաշարներով եւ օտար աշխատուժի ընդունման անսպառ թվացող հնարավորություններով: Այս դատողություններն ավելի պարզեցնելով, հանգում ենք պարզունակ մտայնության. որտե՞ղ է ավելի լավ եւ ձեռնտու ապրելը: Հայ գաստարբայտերներից այս դատողությունները լսելը մեր վիճակում բնական ու հասկանալի է: Բայց հուսանք, որ քաղաքական ու հասարակական վերնախավերը ավելի բարդ ու բարձր կատեգորիաներով պետք է որ դատեն: Ինտեգրացիոն հնարավորություններից լավագույնս օգտվելու նպատակներից են առեւտրի ու արդյունաբերության զարգացումը, հասարակության կենսամակարդակի բարձրացումը, մշակույթի, սոցիալական ոլորտների, կրթության ու գիտության զարգացումը: Ավելի պարզ ասած, խոսքը Հայաստանի եւ Հայաստանում ապրել ցանկացողների մասին է: Ահա թե ինչու, քննարկելով ինտեգրացիայի եւ նրանից սպասվող բարեբեր պտուղների հարցը, մենք դատապարտված ենք առաջնորդվելու տնտեսական կատեգորիաներով եւ խոսելու տնտեսությունների լեզվով: Հայաստանցիների կենսամակարդակը բարձրացնելու այլ դեղատոմսեր չկան: Իմ ծանոթ հեղինակավոր ղազախ տնտեսագետն ասում էր, որ տնտեսության գլոբալացման պայմաններում ոչ մեծ պետությունների ինքնիշխանությունը պահպանելու այլ հեռանկար, քան տնտեսական լուրջ միջազգային միավորումների մեջ ինտեգրվելն է՝ պարզապես գոյություն չունի: Այս խոսքերի ճշմարտացիության մեջ մենք ավելի ենք համոզվում: Մաքսային միության հետ մեր կապերը էլ ավելի խորացնելու հարցը այժմ տնտեսագետ հետազոտողների եւ նրանց որակյալ հետազոտությունների ձեռքում է: Այս եզրակացությանն են եկել Մաքսային միության երկրների վերնախավերի ներկայացուցիչները, եւ կարծում եմ, որ այս աշնանը այդ տնտեսագիտական վերլուծությունները մեր հասարակությանը քննարկելու եւ իմաստավորելու հնարավորություն կունենա: Ասում եմ Մաքսային միության մասին, որովհետեւ Եվրոպական միության հետ ինտեգրման տնտեսական հետեւանքները արդեն ուսումնասիրված են եւ մեր հասարակությունը դրանից քիչ թե շատ տեղյակ է:

Եվ վերջին դիտարկումն այս կապակցությամբ: Համադրելով եվրոպական եւ եվրասիական ինտեգրման հնարավորությունները մեր փոքրիկ երկրի համար, մենք վերջին ամիսների փորձագիտական եւ հասարակական քննարկումներով, կարծես եկել ենք ընդհանուր եզրակացության: Հայաստանը կարող է օրինակ դառնալ համագործակցության եւ բաց տնտեսական շուկայի առավելությունների ցուցադրումների համար: Տնտեսական բարդ իրավիճակում հայտնված եւ աշխարհաքաղաքական աննպաստ վիճակում իր գոյությունը պահպանող մեր պետությունը չի կարող իրեն թույլ տալ այնպիսի շռայլություն, ինչպիսին քաղաքական խմբերի կամ կլանների միջեւ պայքարն է հանուն կողմնորոշումների: Այդ պայքարի եւ առճակատման դեպքում մենք ուղղակի վերջնականապես կթուլանանք եւ կքայքայվենք: Բացվելով եվրասիական եւ եվրոպական ինտեգրման գործընթացների առջեւ, մենք օրինաչափ տուրք ենք տալիս արդի գլոբալ գործընթացներին: Սա նշանակում է, որ մենք հասկանում ենք ժամանակակից աշխարհի գործընթացների տրամաբանությունը: Բայց մեր ժողովուրդը մեծ պատմություն ունեցող եւ շատ արհավիրքներ տեսած ժողովուրդ է, եւ շատ լավ գիտե իր Հայրենիքի գինը: Հենց դրա համար էլ, տնտեսական զարգացման մասին մտածելով, մենք ոչ մի րոպե չպետք է մոռանանք մեր ազգային անվտանգության հրամայականների մասին: Այդ հրամայականները թելադրում են հավատարիմ մնալ հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքին, հասկանալի ու թափանցիկ լինել նախ առաջ մեր ռազմաքաղաքական դաշնակիցների, այնուհետեւ նաեւ մեր մյուս բարեկամների համար: Մեր պատմությունը լավագույնս ապացուցում է, որ հենց որ շիտակ ու հասկանալի քաղաքական մոտեցումներին ուզում են փոխարինել ճարպիկ թվացող խաղերն ու քաղաքական դեգերումները, մենք ունենում ենք անդառնալի կորուստներ:

Պարզեցնելով եզրակացությունը՝ ձեւակերպենք հետեւյալ կերպ. չանել որեւէ քայլ, որը կհակասեր հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքին:

## Որոշ հանգրվանային եզրակացություններ

Ես համաձայն չեմ մեր հասարակական որոշ շրջանակների եւ լրատվամիջոցների հետ, որոնք փորձում են եվրոպական եւ եվրասիական ինտեգրման հեռանկարների միջեւ հակասություն ստեղծելով, բախել եվրոպական եւ ռուսական կողմնորոշումների հետեւորդներին: Համաձայն չեմ, չնայած ինքս էլ երբեմն-երբեմն ներգրավվում եմ դրանցում: Կարծում եմ, շատ ավելի օգտակար կլինի ասպարեզ տալ մեր քաղաքագետներին, տնտեսագետներին, սոցիոլոգներին եւ մյուս փորձագետներին, ովքեր իրական ասելիք ունենալով, կկարողանան հասարակությանը ներկայացնել ինտեգրացիոն գործընթացներից Հայաստանի սպասելիքը եւ մեր առաջիկա խնդիրները: Հիացմունքով եմ հիշում Արցախի պետական համալսարանի մի լսարանում շաբաթ եւ կիրակի օրերին հավաքված երիտասարդներին, ովքեր եկել էին լսելու մեր գործընկեր Կարեն Բեքարյանի ջանքերով կազմակերպված դասախոսությունները: Ես երկու ժամ ներկայացրի եվրասիական ինտեգրացիայի ոլորտում մեր քննարկումների եւ հետազոտությունների արդյունքները եւ համոզվեցի, որ հետաքրքրությունը հսկայական է: Շատ ափսոսում եմ, որ մեզ մոտ քիչ են կազմակերպում հրապարակային քննարկումներ: Թվում է, թե նույն խումբ ակտիվիստները այսօր այս հարթակում են, վաղը՝ մեկ այլ: Կողմնորոշումների միջեւ առճակատում թույլ չտալու լավագույն ուղիներից մեկը որակյալ հասարակական բանավեճերն են: Այս բանավեճերից պետք չէ վախենալ: Հասարակությունը կարող է օգուներ քաղել նույնիսկ այն դժվարին կացությունից, որում մենք հայտնվել ենք: Համոզված եմ, որ բոլորիս ուզածը մեկն է՝ գտնել այն անցավ միջոցներն ու հնարավորությունները, որոնք մեզ ավելի ուժեղ ու ավելի լավ կազմակերպված կդարձնեն:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Թուրքիայում դատական գործ է հարուցվել Եգիպտոսի նորանշանակ իշխանությունների դեմ

## *Եգիպտա-թուրքական հակասություններով կարվեն նաեւ Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Քաթարի հետ Թուրքիայի հարաբերությունները*

Թուրքիան շարունակում է հետեւողականորեն սրել հարաբերությունները Եգիպտոսի հետ՝ դատապարտելով զինվորական հեղաշրջումը: Թվում է, թե դա շուտով կհանգեցնի Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Քաթարի հետ նրա հարաբերությունների սրմանը, քանի որ այս երկրները նախագահ Մուհամմեդ Մուրսիի պաշտոնանկության միջոցով «Մուսուլման եղբայրների» հեռացումը իշխանությունից ողջունել, միաժամանակ հեղաշրջումից հետո զրո տոկոսով 12 մլրդ դոլար վարկ են տրամադրել Եգիպտոսի զինվորական իշխանություններին: Ընդ որում՝ այդ վարկի 3 մլրդ-ը նվիրատվություն է:

Այսինքն՝ Պարսից ծոցի նշված երկրները մերձենում են Եգիպտոսի զինվորական իշխանություններին գուցե ոչ այնքան հեղաշրջմանը հավանություն տալու, որքան «Մուսուլման եղբայրների» նկատմամբ հակազդեցություն դրսեւորելու համար: Դա ունի լուրջ պատճառներ: Դրանցից թերեւս կարեւորագույնը «Մուսուլման եղբայրների» շարժման ծավալումն է Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, որտեղ վերջիններս հասցրել են իշխանության մաս կազմել, ինչպես նաեւ շարժման ծավալումն ու ակտիվ քաղաքական գործունեությունը Մերձավոր Արեւելքում:

Հաշվի առնելով այն դերը, որ խաղացել է «Մուսուլման եղբայրների» շարժումը բռնատիրության տապալման գործում Լիբիայում, Թունիսում եւ Եգիպտոսում, այս շարժման ծավալումը տարածաշրջանում Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրություններն ու Քաթարը դիտում են որպես սպառնալիք իրենց երկրի իշխանություններին, որովհետեւ բռնատիրության տարատեսակ է նաեւ միապետությունը:

Այս երկրները միաժամանակ գիտեն, որ Եգիպտոսի հեղաշրջման դատապարտումը ենթադրում է ողջունել տարածաշրջանում «Մուսուլման եղբայրների» շարժման ծավալումը, ինչը Թուրքիան է անում: Համենայն դեպս, Եգիպտոսի ներքին գործերին խառնվելու համար, ինչպես նշել էինք «**Ազգ**»-ի նախորդ համարում, Կահիրեն պաշտոնական նոտա է տվել Թուրքիային, ընդ որում նոտան ներկայացվել է Եգիպտոսում Թուրքիայի դեսպանին:

Ի դեպ, Սիրիայի ներքին գործերին խառնվելու, գործող նախագահ Բաշար Ասադին տապալելու նկրտումների համար էլ Թուրքիան մինչ այդ փչացրել էր հարաբերությունները Իրանի ու Իրաքի, ինչու չէ նաեւ մասամբ Լիբանանի հետ: Չմոռանալ, որ Իրանը, Սիրիան, Իրաքը Թուրքիայի անմիջական հարեւաններն են:

Ելնելով այս հանգամանքից, «**Ազգի**» հուլիսի 10-ի համարում գրել էինք, որ «հարեւան երկրների հետ առկա խնդիրները զրոյականացնելու» վարչապետ Էրդողանի կառավարության դիրքորոշումը, որի հիմքում արտգործնախարար Դավութօղլուի «ռազմավարական խորություն» տեսությունն է, ի վերջո հանգեց Թուրքիայի տարածաշրջանային գերտերության հավակնությունները հիմնավորող «նոր օսմանիզմի» այսպես կոչված գաղափարախոսությանը:

Միաժամանակ նշել էինք, որ «Մոսուլի թուրքական պատկանելության», «երկու շաբաթում թուրքական զորքերի Դամասկոս մտնելու» մասին հայտարարություններով Թուրքիայում իշխող Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատասխանատու գործիչները հաստատում են «նոր օսմանիզմի» նկրտումների առկայությունը:

Ինչպես երեւում է, Թուրքիայի հարաբերությունները անմիջական հարեւաններից զատ, սրվում են նաեւ տարածաշրջանի մյուս երկրների հետ: Դրա գրավականն են դառնում Եգիպտոս-Թուրքիա հակասությունները, որոնք նախադրյալներ են ստեղծում, որ Թուրքիան սրի հարաբերությունները Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Քաթարի հետ: Եգիպտոսի հետ հակասությունների սրման նախադրյալներ արդեն ստեղծվել են Թուրքիայում:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Դունիա բուլթենի» լրատվական գործակալության կայքէջի երեկվա հրապարակմանը: Կայքէջում նշված է, որ Mazlum-Der միության նախորդ օրվա հայցի համաձայն, Անկարայում դատական գործ է հարուցվել Եգիպտոսի պաշտպանության նախարար, շտաբի պետ, գեներալ Աբդուլ Ֆաթթահ ալ Սիսիի, նորանշանակ նախագահ Ադլի Մանսուրի, փոխնախագահ Մուհամմեդ ալ Բարադեյի, ղպտիների պատրիարք Թավադրոս Բ-ի, սալաֆիների «Նուր» կուսակցության առաջնորդի, մի շարք նախարարների, վարչապետի թեկնածուներից Կենտրոնական բանկի նախկին տնօրեն Զիադ Բահադդինի դեմ:

Հիմք ընդունելով դա, Անկարայի գլխավոր դատախազությունը սկսել է հետաքննել նշված եգիպտացի ղեկավարների գործը, պատճառաբանելով, թե թուրքական քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածը մարդկության դեմ հանցագործություն է համարում դիտավորյալ սպանությունները, խոշտանգումը, տանջանքը, ստրկացումն ու մարդկանց ազատություններից զրկելը, եթե դրանք պարբերաբար համակարգված ձեւով իրականացվում են հասարակության որեւէ հատվածի նկատմամբ, իսկ 13-րդ հոդվածը թուրքական դատարանին իրավունք է վերապահում քննելու մարդկության դեմ կատարված հանցագործությունները, անկախ իրականացման վայրից:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Լյուքսեմբուրգի վարչապետը հեռանում է գաղտնալսումների պատճառով



**Լյուքսեմբուրգի վարչապետ Ժան-Կլոդ Յունկերը հայտարարել է, որ ինքը հրաժարական է տալիս այն սկանդալի պատճառով, որը կապված է երկրի հատուկ ծառայությունների կողմից բարձրաստիճան քաղաքական գործիչների անօրինական գաղտնալսումների հետ: Այդ մասին հաղորդում է Ֆրանս պրես գործակալությունը:**

**Յունկերը հրաժարական տալու որոշումն ընդունել է այն բանից հետո, երբ կառավարող կոալիցիայում իր կուսակցության դաշնակիցները պաշտպանել են խորհրդարանը ցրելու եւ վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու նախաձեռնությունը: Վարչապետը իր հրաժարականի դիմումը Լյուքսեմբուրգի Մեծ դքսին պաշտոնապես ներկայացրել է հուլիսի 11-ին:**

**Հուլիսի սկզբներին հայտնի էր դարձել, որ Լյուքսեմբուրգի գաղտնի ծառայությունը (SREL) ապօրինաբար լրտեսել է երկրի քաղաքական գործիչներին (այդ թվում՝ հենց Յունկերին), գաղտնալսել նրանց խոսակցությունները: Հատուկ ծառայության աշխատակիցները զբաղվել են նաեւ արդյունաբերական լրտեսմամբ, կաշառքներ են վերցրել եւ պետական միջոցները օգտագործել անձնական նպատակներով:**

**Խորհրդարանական հաշվետվության տվյալների համաձայն, Յունկերը տեղյակ է եղել անցուդարձին, բայց անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել հակաօրինական գործողությունների կասեցման համար, թեպետեւ ունեցել է համապատասխան լիազորություններ: Բացի դրանից, նա խախտումների մասին չի հայտնել ո՛չ խորհրդարանին, ո՛չ էլ դատարանին:**

**Ժան-Կլոդ Յունկերը Լյուքսեմբուրգի կառավարչությունը գլխավորում էր 1995 թվականից. 18 տարվա վարչապետությունը ռեկորդային ժամկետ է Եվրամիության պետությունների համար: Յունկերը նաեւ համարվում է ԵՄ սկիզբը դրած Մաաստրիխտի համաձայնագրի ճարտարապետներից մեկը:**

ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ ՈՒ ԼՐՏԵՍՄԱՆ ԳՈՐԾՈՎ

# Լատինամերիկյան 4 երկրներ բացատրություն են պահանջել ԱՄՆ-ից

**Մեքսիկան, Բրազիլիան, Կոլումբիան եւ Չիլին ԱՄՆ-ից բացատրություններ են պահանջել ամբողջ տարածաշրջանում ամերիկացիների իրականացրած լրտեսման, հեռախոսազրույցների գաղտնալսման եւ էլեկտրոնային նամակագրության վերահսկման փաստերի կապակցությամբ: Այդ մասին հաղորդում է BBC-ն:**

**Բրազիլական լրատվամիջոցների տվյալներով, լրտեսման օբյեկտների ցանկում եղել են Լատինական Ամերիկայի էներգետիկական եւ նավթային մի շարք ընկերություններ: Ամերիկյան հատուկ ծառայությունները տեղեկություններ են հավաքել մասնավորապես Վենեսուելայի ձեռք բերած զինատեսակների վերաբերյալ: Տարածաշրջանային թերթերը գրում են, որ ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի հրապարակած տվյալներից հայտնի է դառնում, որ ԱՄՆ-ը տեղեկություններ է հավաքել նաեւ Բրազիլիայում:**

**Վենեսուելայի բանտերի նախարար Իրիս Վարելան հուլիսի 11-ին երկրի բնակչությանը խորհուրդ է տվել այլեւս չօգտվել Facebook սոցիալական ցանցից, որպեսզի դադարեցվի տեղեկությունների արտահոսքը դեպի Միացյալ Նահանգներ:**

**Պ. Ք.**

# Սաուդցի իշխանուհին մեղադրվում է մարդավաճառության մեջ



**Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքի ներկայացուցչուհիներից մեկը ԱՄՆ-ում կալանավորվել է մարդավաճառությանը մեղսակից լինելու կասկածանքով: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ իշխանուհուն մեղադրանքներ են ներկայացվել մարդկանց առեւտրի մեկ կետով, որը նախատեսում է մինչեւ 12 տարվա ազատազրկում: Դատարանը նրա համար սահմանել է 5 մլն դոլար գրավ եւ արգելել է հեռանալ ԱՄՆ-ի տարածքից, որտեղ նա այժմ բնակվում է:**

**Խոսքը 42-ամյա Մեշաել Ալայբանի մասին է, որը սաուդցի իշխան Աբդել Ռահման բեն Նասեր բեն Աբդել Ազիզ Ալ Սաուդի կանանցից մեկն է: Կալիֆոռնիայի նահանգի Իրվայն քաղաքի ոստիկանությունը իշխանուհի Ալայբանին կալանավորեց այն բանից հետո, երբ ոստիկանություն դիմեց նրա նախկին աղախինը՝ Քենիայի 30-ամյա մի քաղաքացուհի: Վերջինս պատմեց, որ 2012-ին Քենիայում իրեն վարձել էին Սաուդյան Արաբիայում աշխատելու համար, սակայն տեղ հասնելուց անմիջապես հետո խլել էին անձնագիրը եւ ստիպել էին աշխատել պայմանավորված ժամերից ավելի եւ անհամեմատ ցածր վարձատրությամբ: Նախկին աղախինն ասում է, որ գործատուները հրաժարվում էին իրեն բաց թողնել, եւ որ ինքը փախել է իշխանուհու տնից:**

**Ոստիկանության ներկայացուցիչների տվյալներով, Քենիայի քաղաքացուհին եւ ֆիլիպինցի չորս ուրիշ աղախիններ Ալայբանի ընտանիքի հետ ԱՄՆ են եկել 2013-ի մայիսին: Քենիացուն խոստացել էին վճարել ամսական 1,6 հազար դոլար, բայց շուրջօրյա եւ առանց հանգստյան օրերի աշխատեցնելով՝ վճարել են ամսական ընդամենը 220 դոլար:**

**Ֆիլիպինուհի 4 աղախինները Ալայբանի տուն մտած ոստիկաններին հասկացրել են, որ իրենց ազատությունը նույնպես սահմանափակված է եղել: Սակայն ֆիլիպինուհիների առնչությամբ սաուդցի իշխանուհուն որեւէ մեղադրանք չի ներկայացվել:**

# ԵՄ ճգնաժամն ու գործազրկությունը կրճատել են ծնունդները

2008-ից Եվրոպայում սկսված ֆինանսական ճգնաժամի պայմաններում ծնունդները նվազել են: Այդ են վկայում գերմանացի գիտնականների նոր հետազոտության արդյունքները:

Մաքս Պլանկի անվան ժողովրդագրական հետազոտությունների ինստիտուտի գիտնականները պարզել են, որ եվրոպական 28 երկրներում ծնելիությունը նվազել է գործազրկության աճին զուգընթաց:

Դա վերաբերում է մանավանդ մինչեւ 25 տարեկան երիտասարդներին եւ Հարավային Եվրոպայի (օրինակ, Իսպանիայի) բնակիչներին, նշում է BBC-ն:

Գիտնականները վաղուց են քննարկում տնտեսության վիճակի եւ ծնելիության փոխադարձ կապը, սակայն այս առնչությամբ դժվար է միանշանակ հետեւություններ անել:

Գերմանացի գիտնականները կարծում են, որ իրենց աշխատանքը որոշակի առաջընթաց է տվյալ ասպարեզում, քանզի ցույց է տալիս, որ արդի եվրոպական երկրում գործազրկության մակարդակը իրոք անդրադառնում է ծնելիության վրա:

«Ֆինանսական ճգնաժամը Եվրոպա եկավ այն պահին, երբ շատ երկրներում ծնելիությունը սկսել էր աճել», ասում է ժողովրդագիր Միքայելա Քրեյենֆելդը: Նրա խոսքերով, տնտեսական անկման հետեւանքով որոշ երկրներում այդ աճը կանգ առավ, այլ երկրներում ծնունդները կրճատվեցին:

Իսպանիայում 2008-2011 թթ. գործազրկության մակարդակը 8,3-ից բարձրացավ 11,3 տոկոսի: Նույն ժամանակահատվածում մեկ կնոջն ընկնող ծնունդների թիվը կրճատվեց գրեթե 8 տոկոսով:

Ծնելիության նվազում նկատվեց նաեւ Հունգարիայում, Իռլանդիայում, Խորվաթիայում եւ Լատվիայում, դրա մակարդակի բարձրացումը դանդաղեց Չեխիայում, Լեհաստանում եւ Մեծ Բրիտանիայում:

Ճգնաժամի հետեւանքները գրեթե աննկատելի են միայն Գերմանիայում եւ Շվեյցարիայում, որտեղ նորածինների թիվը փաստորեն մնացել է անփոփոխ:

ԳՅՈՒՄՐԻ

# «Էն ուրիշ Ֆրունզիկը». ֆիլմ արտիստի մասին

Մհեր (Ֆրունզիկ) Մկրտչյան արտիստի մասին իրենց նոր նկարահանած կինոնկարի հեղինակներ Հովհաննես Պատիկյանն ու Շուշանիկ Սահակյանը հուլիսի 10-ին՝ նրա ծննդյան 83-ամյակի օրերին, առաջինը ներկայացրին մեծ արվեստագետի ծննդավայր Գյումրիում՝ «Հոկտեմբեր» կինոթատրոնում: «Էն ուրիշ Ֆրունզիկը» 53 րոպե տեւողությամբ վավերագրական ժապավենը ստեղծագործական խմբի երեք տարվա աշխատանքի արդյունքն է եւ հայ բեմի ու կինոյի տաղանդավոր վարպետին ներկայացնում է յուրովի:

Ի տարբերություն Մհեր Մկրտչյանի մասին պատմող շատ այլ գործերի, այստեղ չկան տարբեր մարդկանց կարծիքներ, տխուր ու դժբախտ մարդու նրա հայտնի կերպարի վերարծարծումներ: Այստեղ արտիստը հիմնականում ինքն է խոսում, որով մեզ ներկայանում է, հեղինակների իսկ բնորոշմամբ, փիլիսոփա, մտածող Մհեր Մկրտչյանը, որն ամբողջ կյանքում չբացվեց, ոչ մի տեղ չփորձեց երեւալ, բացի դերերից: Ֆիլմում օգտագործվել են արտիստի ձայնագրությունները, որտեղ նա խոսում է արվեստի, կինոյի ու թատրոնի մասին, ներկայացված են հատվածներ թատրոնում ու «Հայֆիլմի», «Մոսֆիլմի», «Վրացֆիլմի» կինոժապավեններում նրա խաղացած դերերից:

Գյումրեցի հանդիսատեսը 53 րոպե կրկին համախմբված էր մեծ արվեստագետի հետ եւ ջերմորեն ընդունեց կինոնկարը: Իսկ որ «Հոկտեմբեր» կինոթատրոնի դահլիճն այս առիթով սպասվածի չափ մարդաշատ չէր, մեղավորը, թվում է, ոչ հանդիսատեսն էր, ոչ, առավել եւս, ֆիլմի հեղինակները, այլ՝ մարդկանց վաս իրազեկումը: Սա առաջին անգամը չէ, երբ քաղաքում կազմակերպվող մի արժեքավոր մշակութային միջոցառման մասին մարդիկ իմանում են դրա տեղի ունենալուց հետո:

Գ. Ս.

# Չի բացառվում ստեղծվի ֆիլմ Հայաստանի մասին՝ Յոս Ստելինգի կողմից



«Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակում նորից Հայաստան է ժամանել հոլանդացի կինոռեժիսոր Յոս Ստելինգը, որի «Աղջիկը եւ մահը» ֆիլմի Երեւանյան պրեմիերան տեղի ունեցավ երեկ:

Ինքնուս Ստելինգը զարմացրեց բոլորին, երբ նրա առաջին ֆիլմն ընգրկվեց Կաննի կինոփառատոնում: Այդ ժամանակից ի վեր Ստելինգը շատ հաջողությունների է հասել եւ արժանացել 4 «Ոսկե հորթի», 2 «Ոսկե գրիֆոնի» (Սանկտ Պետերբուրգ), 1 «Ոսկե վարդի» (Մոնտրո):

Ռեժիսորը Հայաստանում զգում է իրեն ինչպես իր տանը. «Երբ շրջագայում եմ եվրոպական երկրներում, այնուհետեւ գալիս եմ Հայաստան, «Զվարթնոց» օդանավակայան հասնելուն պես սիրտը սկսում է ավելի արագ տրոփել, ինչպես ճանապարհորդելուց հետո հայրենիք վերադառնալիս է լինում»:

Ի դեպ, Յոս Ստելինգը չի բացառում, որ Հայաստանի մասին եւս առաջիկայում ֆիլմ կնկարահանի. «Առավոտյան կնոջս ասում էի, թե վատ չէր լինի մոտ 44 րոպեանոց ֆիլմ նկարահանել Հայաստանում»:

Իսկ «Ոսկե ծիրան»-ում ներկայացված ֆիլմը ռուս երիտասարդ Նիկոլայի եւ կուրտիզանուհի Էլիզի ողբերգական սիրո պատմության մասին է, որն ընդհատվում է նյութապաշտության, հարստության եւ մահվան սպառնալիքի պատճառով:

Ֆիլմի հերոսուհին՝ Էլիզան, թոքախտով է տառապում, իսկ թոքախտն այնպիսի հիվանդություն է, որ երբ սկսում ես հուզվել, գլուխ է բարձրացնում, ինչի համար էլ այն հաճախ սիրահարների հիվանդություն են անվանում: Էլիզայի սերն իր մահն է, քանի որ, երբ աղջիկը սիրահարվում է, հիվանդությունը ջրի երես է դուրս գալիս:

Ինչպես հավաստիացնում է ռեժիսորը, ֆիլմն ստեղծելիս ներշնչանքի աղբյուր է դարձել Գորկու համանուն ստեղծագործությունը: Ինձ ավելի շատ գրավում է ռուսական մշակույթը՝ Չեխովի մթնոլորտը, մահը՝ որպես կյանքի հանդեպ ներշնչանքի աղբյուր, ինչպես նաեւ Դոստեւսկու հումորը: Ռուսների միջավայրում միայն մեկ բան չես կարող անել՝ կատակել, քանի որ, ըստ ռուսների, եթե ռուս չես, իրավունք չունես նրանց մասին կատակել»:

Ինչ վերաբերում է հոլանդացիներին, ռեժիսորն ասում է. «Շատ հեգնասեր մարդիկ են, նրանց հումորը փախուստ է նման, իսկ ռեժիսորը հումորն ընդհանրապես օգտագործում է որպես դեպի հանդիսատեսի սիրտը տանող բանալի»: Ռեժիսորն ընդգծում է, որ բոլոր նրանք, ովքեր իր հետ են աշխատում, պետք է իրենից լավը լինեն:

Յոս Ստելինգը կարծում է, որ ֆիլմն արվեստի այն միակ տեսակն է, որը կարող է ժամանակի հետ խաղալ, եւ երաժշտությունից հետո կինոն երկրորդն է, ինչը կապ չունի ուղեղի հետ՝ այն միանգամից հոգու հետ է կապ հաստատում, իսկ իր ֆիլմն սիրային դրամատիկ պատմություն է, որն ստեղծելը շատ հեշտ է:

Ստելինգը նշեց նաեւ. « Մարդիկ ձգտում են իրար եւ լավ ֆիլմ ստեղծելու համար պետք է իրար ձգտող երկու իրերի, երեւույթների, մարդկանց միջեւ խնդիրներ ստեղծել: Ռեժիսորին շատ է հետաքրքրում երկուսի միջեւ եղած տարածությունը, որն ըստ նրա, արվեստի տարածությունն է»:

Ռեժիսորն Ալեքսանդր Պուշկինին համարում է աշխարհի ամենալավ գրողը:

Նշենք, որ Յոս Ստելինգը նկարահանել է «Մարիկեն վան Նյումեգեն», «Էլքերլիկ», «Ռեմբրանդտ. դիմանկար 1669», «Զեւացողները», «Անճարարը», «Սլաքավարը», «Թռչող հոլանդացին», «Սպասասրահ», «Ոչ ինքնաթիռ, ոչ գնացք», «Բենզակայան», «Առեւտրի սրահը», «Դուշկա»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Առաջին տպավորությունը **Հարություն Արմենյանի** նկարչությունից հոգուդ նրբորեն դիպչող հանդարտությունն է, ակնհայտ այնքան, որ այլ վերարտահայտությունների անհրաժեշտություն չես ունենում: Այնպիսի զգացողություն, սովորաբար, առաջանում է, երբ հաղորդակից ես դառնում մեկ ուրիշի հոգեկան վիճակի չափազանց մաքուր արտահայտության: Հարություն Արմենյանը այնպես է նկարում, ինչպես գրում է: Իր տպավորապաշտ նկարչությունը անմիջական արձագանքն է բնության ձայնի. այդ հարազատությունն է, որ հայտնաբերելով իր ներսում, նա կարողանում է այդքան անմիջականորեն



Երեւանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա (YSAFA)

# Գույնի տարրալուծումը հայացքի մեջ

## «Ջրանկար բացիկներ՝ ճանապարհէն»



զգալ բնության յուրաքանչյուր շարժում, յուրաքանչյուր փոփոխություն, ծովի խռովքի մեջ տեսնել ներքին հանդարտությունը, զգալ առավոտվա լույսից կերպափոխված ծառի սերը: Այդպիսին են նաեւ նրա գրական ստեղծագործությունները, արձակ բանաստեղծությունները՝ հանդարտ, խոհուն, մտային մաքուր վիճակների խոսքային դրսեւորումներ:

Նկարչությամբ նա փորձում է «թարգմանել» աշխարհի գունային ամբողջականության փիլիսոփայությունը, շատ նուրբ զգալով գույնի հուզականությունը, ռիթմը, մեղեդայնությունը, այսինքն՝ երկրի գեղեցկության հմայքը լույսի անդրադարձումներում:

Հ. Արմենյանի նկարներում գույնը ծնվում է լույսից՝ ամեն օր ծագող արեւի՝ աշխարհին նետված հայացքի համբույրից: Այս մանրանկարները պատմում են հուզական նուրբ աշխարհ ունեցող էության մասին: Ջրաներկը, նկարչական այն միջոցը, որով աշխատում է հեղինակը, ավելի ընդգծում է զգացմունքի թափանցիկությունը:

Հարություն Արմենյանի ցուցահանդեսը, որ այս օրերին ընթանում է Գեղարվեստի ակադեմիայի Ալբերտ եւ Թով Բոյաջյան ցուցասրահում, կրում է «Ջրանկար բացիկներ ճանապարհէն» խորագիրը եւ ներկայացնում է փոքրաչափ բացիկներ հիշեցնող բնանկարների շարք՝ աշխարհագրական ընդգրկուն միջավայրով: Սովորաբար ճամփորդության տպավորությունների լավագույն ձեւը համարում են օրագրային գրառումները, Հ. Արմենյանի պարագայում այդ գրառումները ջրաներկ պատկերներ են: Նկարչական այս «օրագրությունը» սկսվում է իր նախնիների բնօրրանից՝ Արեւմտյան Հայաստանից («Վանա ծով. առաջին արշալույս», «Վանի բերդը», «Տխուր Անի», «Բիթլիս», «Բերկրի ջրվեժը», «Արարատը՝ 4200 մետր եւ ավելին»), ձգվում դեպի Ամերիկյան մայրցամաք, մինչեւ ներկա իր բնակավայրը՝ Կալիֆոռնիա («Բալթիմոր զբոսայգի», «Սմիթ կղզի. Մերիլենդ», «Ճանապարհ. Արեւմտյան Վերջինիա», «Ծովեզերք. Սան Դիեգոյի մոտ» եւ այլն), ապա տարածվում Լիբանան, Սաուդյան Արաբիա, Թայլանդ, Ճապոնիա, Վենեսուելա, եվրոպական երկրներ եւ, իհարկե, հասնում Հայաստան («Նորավանք», «Գառնի», «Սեւանա ծովեզր», «Կոնդ. ավերակ տուն», «Վերացական Հաղարծին», «Օշականի ձորը»):

Ամենուր աշխարհի բազմազանության գունային նրբահյուսվածքների, դրանց փոխլրացումների, ներթափանցումների զգացողություններ են, ամենուր իշխում են հանդարտ հավասարակշռությունը, բարեբեր խաղաղությունը: Այդպես չէ՞ իրականության մեջ: Սակայն նկարչական այս դրսեւորումներում (ինչպես եւ արձակ բանաստեղծություններում) արտահայտված է կյանքի այն կերպը փիլիսոփայական, ինչն իր մեջ կրում է հեղինակը, այն է՝ բնության իմաստնության անսխալականությունը:

Այս նկարները ծառերի մանրատերեւների, ծովի լռության, սարերի մթնշաղի, լեռնալանջերին կպած մանրիկ ծաղիկների, միջօրեի տաք քարերի, կղմինդրե տանիքի կարմրի, կամրջի փխրուն նրբագծի արտաքին գեղեցկությունները փոխանցելուց բացի, բնության մեջ լինելու անմիջական զգացողություն են արթնացնում: Եվ ինչ խոսք, նկարներում տիրապետող կատարյալ հանդարտությունը ներհայեցողաբար ապրող անհատի ներքին կյանքի արձագանքն է:

Այս առումով շատ բնորոշ էր ցուցահանդեսի բացմանը Հայաստանի ամերիկյան համալսարանի վարչական տնօրենուհի Անահիտ Օրդյանի խոսքի այն հատվածը, որտեղ նա պատմում էր, թե ինչպես Լիբանանի քաղաքացիական պատերազմի մղձավանջային տարիներին Հարություն Արմենյանը իր հոգեկան հանգստությունը ստացել է օրեր շարունակ անցկացնելով ներքնահարկում նկարելով: Ըստ նրա՝ կյանքի այն դասն է դրանով փոխանցվել իրենց, որ ամենադժվար կացությունն անգամ կարող է ծնել նոր հնար, դրական նոր ելք: Սա ունի նաեւ իր երկրորդ խորհուրդը. այն է՝ կյանքն ապրել բազմակողմանիորեն, բացի սեփական մասնագիտությունից, ներսումդ կարողանալ բացել հետաքրքրությունների տարբեր աշխարհներ (Հարություն Արմենյանը 14 տարի եղել է Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահը, միաժամանակ նա USLA համալսարանի պրոֆեսոր է եւ պատվո պրոֆեսոր Ջոն Հոփքինս համաճարակաբանության համալսարանի, որպես դեկան եղել է Բեյրութի ամերիկյան համալսարանի հանրային առողջապահության ֆակուլտետի: Հեղինակ է բազմաթիվ մասնագիտական, միաժամանակ բանաստեղծական գրքերի):

Այդ ելքը կամ նոր իրականությունը արվեստում լայն տարածում ունեցող escapism (փախուստ իրականությունից) կոչվածն է, երբ ասբուրդի հասած իրականությունը ստիպում է արվեստագետին, արտիստիկ էության տեր մարդուն իր ներսում ստեղծել-բացահայտել նոր իրականություն, նոր ճշմարտություն:

Այս տպավորությունը լրացրեց ՀԱՀ-ի հիմնադիրներից Արմեն Տեր-Կյուրեղյանը, ինչպես նաեւ Հ. Արմենյանի լեռնագնաց ընկերներից մեկը, երբ պատմեց Կլիմանջարոյի սարը միասին բարձրանալու ընթացքի եւ անհրաժեշտ դադարի մասին, երբ ի տարբերություն շատերի, որոնք նախընտրում էին հանգստի պասիվ-հորիզոնական դիրքը, Հարություն Արմենյանը վրձնի ու ջրաներկի մեջ էր այդ հանգիստը գտնում:

Գեղակադեմիայի Ալբերտ եւ Թով Բոյաջյան ցուցասրահը, թեեւ տարածքով մեծ չէ, սակայն տարիների հոգածու աշխատանքի, պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսների շնորհիվ լավագույն համարում ունեցող մշակութային վայրերից մեկն է մեր քաղաքի, որտեղ իսկապես ջերմ մթնոլորտ է ստեղծվում, իհարկե, նախ եւ առաջ ռեկտոր Արամ Իսաբեկյանի հաղորդական բնույթի շնորհիվ: Այսպես անմիջական էլ նա գնահատեց հեղինակի՝ բնության տպավորությունների նրբանրբ աշխատանքները:

Նույնպես եւ՝ Պողոս Հայթայանը. նա նկատեց ցուցադրված նկարների գունային ներդաշնակ անցումների, մեղմ զգացմունքների թափանցիկ արտահայտությունները: «Բարեկամներիցս մեկի տանը իր գործերից տեսա: Ասի՝ ոնց որ համբույր լինի, միամիտ, հանգիստ, մաքուր: Այս մարդը հոգու մեջ վաղուց ունեցել է այսքան գեղեցիկ լույսե՜ր»:

Այս լույսն է հենց, որ Հարություն Արմենյանի անձի շուրջ ստեղծել է մտերմիկ ջերմության այն դաշտը, անկեղծ համակրանքն ու խորը հարգանքը, նույնիսկ մեկ-երկու շփումների պարագայում, որը եւ տիրում էր ամառային այդ օրը, գեղակադեմիայի ցուցասրահում:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Փյունիկը» հաղթահարեց մակեդոնական արգելքը




Հայաստանի գավաթակիր «Փյունիկը» հաջողությամբ հաղթահարեց Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլի արգելքը՝ պատասխան խաղում չափազանց ծանր մրցակցությունում հաղթելով մակեդոնական «Տետեխին»: Մրցակիցների առաջին հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1, ընդ որում «Փյունիկը» խաղի վերջին րոպեին ձեռքից բաց էր թողել հաղթանակը: Այնպես որ պատասխան խաղում փյունիկցիներին հաջորդ փուլ դուրս գալու համար բավարարում էր նույնիսկ 0-0 հաշիվը: Իսկ ահա հյուրերին անհրաժեշտ էր գոլ խփել: Եվ դա էր պատճառը, որ «Տետեխը» առաջին իսկ րոպեներից դիմեց ակտիվ գործողությունների:

Առաջին խաղակեսում հյուրերը վտանգավոր մի քանի պահ ստեղծեցին փյունիկցիների դարպասին, սակայն հաջող խաղաց դարպասապահ Գոռ Մանուկյանը: «Փյունիկն» էլ իր հերթին կարող էր բացել հաշիվը, բայց գոլային պահերը չիրացրին Աղվան Պապիկյանն ու Գագիկ Պողոսյանը: Ընդմիջումից հետո խաղի տեմպն ավելի բարձրացավ, մրցակցությունն էլ թեժ բնույթ կրեց: Կարող էր աչքի ընկնել Սարգիս Բալոյանը, բայց հիանալի խաղաց հյուրերի դարպասապահը: Նա հետ մղեց նաեւ Աղվան Պապիկյանի վտանգավոր հարվածը: «Տետեխի» ֆուտբոլիստներն էլ անընդհատ գրոհում էին եւ փորձում խփել իրենց այնքան անհրաժեշտ գոլը: Հատկապես հիշարժան էր 87-րդ րոպեին Ֆիլիպ Դեսպոտովսկու հուժկու հարվածը, որից հետո դարպասապահ Գոռ Մանուկյանը ակրոբատիկ ցատկով փրկեց դրությունը:

Խաղավերջում հյուրերն ամբողջ կազմով նետվեցին գրոհի՝ փորձելով կորզել հաղթանակը: Օգտվելով դրանից, փյունիկցիները կտրուկ հակագրոհներ էին կազմակերպում, որոնցից մեկի ժամանակ էլ Վիուլեն Այվազյանը փորձեց գրավել դարպասը, սակայն դարպասի գծի վրա դարպասապահը որսաց գնդակը: Քիչ անց Այվազյանն ուղղեց իր սխալը եւ մեն մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց՝ հաղթական վերջակետ դրեց լարված հանդիպմանը:

«Շիրակից» հետո «Փյունիկը» դարձավ հայկական երկրորդ ակումբը, որն իրավունք ստացավ շարունակելու պայքարը: Հաջորդ փուլում «Փյունիկի» մրցակիցը կլինի իռլանդական «Սենտ Պատրիկի» եւ Վիլնյուսի «Ժալգիրիսի» մրցախաղի հաղթողը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքներն արտահայտեցին:

**Ռաֆայել Նազարյան** («Փյունիկ») - Շատ ուրախ եմ հաջողության համար, շնորհավորում եմ մեր թիմին: Շատ լարված հանդիպում ստացվեց: Այսօր մեզ ավելի շատ հետաքրքրում էր ընդհանուր արդյունքը: Եթե հաշվի առնենք մեր խաղացողների տարիքը, ապա նրանք ավելի կազմակերպված էին գործում խաղադաշտում: Ամեն դեպքում գոլային պահերով մենք գերազանցեցինք հակառակորդին: Այս հաջողությունում իրենց ներդրումն ունեցան թիմի բոլոր ֆուտբոլիստները: Երկարատեւ ընդմիջումից հետո կարողացանք հաղթահարել առաջին փուլի արգելքը: Կամո Հովհաննիսյանի վնասվածքը շատ լուրջ է, բայց հուսով եմ, որ բժիշկները կհասցնեն ապաքինել նրան: Կամոն մեր առանցքային ֆուտբոլիստներից է, սակայն նրան փոխարինած խաղացողը լավ խաղաց:

**Գորազդ Միխայլով** («Տետեխ») - Նախ շնորհակալություն «Փյունիկին»՝ լավ ընդունելության համար: Շնորհավորում եմ մրցակցին երկրորդ փուլ դուրս գալու համար, միգուցե կարողանան դուրս գալ նաեւ երրորդ փուլ: Շատ հետաքրքրական եւ լարված խաղ ստացվեց: Մենք ավելի շատ էինք տիրում գնդակին, բայց պարտվեցինք: Վերջին րոպեներին մենք մեծ ուժերով էինք գրոհում, իսկ «Փյունիկն» օգտագործեց իր հնարավորությունը: «Փյունիկը» շատ երիտասարդ թիմ է, ինչը կարեւոր է հայկական ֆուտբոլի ապագայի համար: Թիմը համալրված է տեղացի հեռանկարային ֆուտբոլիստներով: Ինձ համար անակնկալ էր, թե նման երիտասարդ տարիքում ինչպես էին նրանք խաղում:

## Աղասյանը չարդարացրեց սպասելիքները



**Կազանում ընթացող Ունիվերսիադայի ծանրամարտի մրցումներում երեկ մրցահարթակ դուրս եկավ մինչեւ 85 կգ քաշային Աղասի Աղասյանը: Երկու տարի առաջ Չինաստանում կայացած Ունիվերսիադայում Աղասին հիանալի ելույթ էր ունեցել՝ մինչեւ 75 կգ քաշային կարգում նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Կազանում էլ նրանից սպասելիքները մեծ էին, սակայն, ցավոք, չարդարացան: Աղասին երկու վարժություններում էլ միայն առաջին մոտեցումները հաջող կատարեց եւ երկամարտի 340 կգ (150+190) արդյունքով գրավեց ընդամենը 6-րդ տեղը:**

**Ունիվերսիադայի չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Ապտի Այխադովը, որը ցույց տվեց 372 կգ (167+205) արդյունք: Նրան 1 կգ-ով զիջեց նրա հայրենակից Արտյոմ Օկուլովը: Բրոնզե մեդալը նվաճեց մոլդովացի Գեորգի Կերնեյը՝ 360 կգ (165+195):**

## «Գանձասարը» դուրս մնաց պայքարից

**Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլի պատասխան խաղում էլ Կապանի «Գանձասարը» հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեց Ղազախստանի «Ակտոբեին» եւ դուրս մնաց հետագա պայքարից: Արդեն երկրորդ րոպեին դաշտի տերերից Թիմուր Կապաձեն բացեց հաշիվը: 35-րդ րոպեին «Գանձասարի» ավագ Նարեկ Բեգլարյանը գլխի հարվածով վերականգնեց հավասարակշռությունը:**

**Ընդմիջումից հետո կրկին աչքի ընկավ Կապաձեն՝ առաջ մղելով «Ակտոբեին»: Հիշեցնենք, որ Երեւանում էլ «Գանձասարը» մրցակցին զիջել էր 1-2 հաշվով:**

## Անդրեասյանն ու Հովհաննիսյանը հաջող են մեկնարկել

**27-րդ Ունիվերսիադայի շախմատի մրցաշարում հաջող են հանդես գալիս Զավեն Անդրեասյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը, որոնք 3 տուրից հետո վաստակել են 2,5-ական միավոր: Զավենը 2-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Թեոդոր Անտոնի հետ, իսկ հաջորդ մրցախաղում հաղթեց Նիկոլա Նեստորովիչին: Ռոբերտն էլ սկզբում հաղթեց ադրբեջանցի Զաուր Մամադովին, ապա հաշտություն կնքեց լեհ Կրժիժտոֆ Բուլսկու հետ:**

**3 տուրից հետո մրցաշարային աղյուսակը հարյուր տոկոսանոց արդյունքով գլխավորում են ուկրաինացի Վլադիմիր Օնիշչուկը եւ չինացի Լի Չաոն:**



## Մխիթարյանը նորամուտը նշեց գոլով



**Դորտմունդի «Բորուսիայի» կազմում Հենրիխ Մխիթարյանի նորամուտը շատ հաջող ստացվեց: Մասնակցելով շվեյցարական «Բազելի» հետ ընկերական հանդիպման առաջին խաղակեսին, Հենրիխը դարձավ գոլի եւ գոլային փոխանցման հեղինակ՝ մեծապես նպաստելով թիմի հաջողությանը, որը խաղը շահեց 3-1 հաշվով:**

**Արդեն 11-րդ րոպեին Մխիթարյանն աջ եզրով սրընթաց ներխուժեց տուգանային հրապարակ եւ գնդակը հասցեագրեց Ռոյսին, որն էլ բացեց հաշիվը: Իսկ 27-րդ րոպեին Հենրիխը տուգանայինի մատույցներից դիպուկ հարվածով կրկնապատկեց հաշիվը:**

**«Բորուսիայի» մարզական տնօրեն Միխայել Ցորկն իր գոհունակությունն է արտահայտել Մխիթարյանի խաղի մասին, նշելով, որ հայ ֆուտբոլիստը դրսեւորեց իր բարձր կարգը: Իսկ «Բիլդը» հետեւյալն է նշել. « Մխիթարյանը թիմի համար գերազանց ձեռքբերում է: «Բազելի» նկատմամբ տոնած հաղթանակը ցույց տվեց, որ Հենրիխ Մխիթարյանը հաջողությամբ է փոխարինում Մարիո Գյոտցեին»:**

## Մարկոսը բացեց գոլերի հաշիվը «Կրասնոդարում»

**Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Մարկոս Պիզելին բացեց գոլերի հաշիվը «Կրասնոդարում»: Ավստրիայում չեխական «Վիսոչինայի» հետ անցկացրած ստուգողական խաղում Մարկոսը գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ՝ հեռահար հարվածով գնդակն ուղարկելով դարպասի վերին անկյունը: Դա այդ խաղում «Կրասնոդարի» խփած 2-րդ գոլն էր: «Կրասնոդարը» հաղթեց 3-1 հաշվով:**

## Դարչինյան-Դոներ մենամարտը նախատեսված է նոյեմբերին

**«Top Rank» պրոմոութերական ընկերության ղեկավար Բոբ Արումը հայտարարել է, որ աշնանը կկայանա աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն, 37-ամյա Վախթանգ Դարչինյանի եւ քաշային 3 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, 30-ամյա Նոնիտո Դոների ռեւանշ մենամարտը: Այն նախատեսվում է անցկացնել նոյեմբերին: Իսկ մինչ այդ Վախթանգը մտադիր է օգոստոսին ռինգ դուրս գալ այլ բռնցքամարտիկի հետ մրցախաղում:**

**Նոնիտո Դոներն այն եզակի բռնցքամարտիկներից մեկն է, որին հաջողվել է պարտության մատնել Դարչինյանին: 2007-ին ԱՄՆ-ում կայացած մենամարտում նա 5-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկել հայ բռնցքամարտիկին: Դարչինյանը բազմիցս Դոներին մարտահրավեր է նետել, սակայն վերջինս տարբեր պատրվակներով մշտապես խուսափել է Վախթանգի հետ մենամարտելուց: Ինչպես երեւում է, երկար սպասված մենամարտը վերջապես կկայանա:**

## Մովսիսյանի հաղթարշավն ընդհատվեց

**Իսպանական Բենասկում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Կարեն Մովսիսյանը ոչ-ոքի խաղաց Մարիո Էստեբանի հետ: Կարենը 5,5 միավորով 19-րդ տեղում է: Աղյուսակը 6,5 միավորով գլխավորում է Էդուարդո Իտուրիզագան, որը հաղթեց Խուլիո Գրանդային:**

## Հայ շախմատիստների մրցակիցները հայտնի են

**ՖԻԴԵ-ն հրապարակել է օգոստոսի 11-ին Նորվեգիայի Տրոմսյո քաղաքում մեկնարկող շախմատի աշխարհի գավաթի խաղարկության խաղացանկը: Մրցաշարի 128 մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունեցող Լեւոն Արոնյանն առաջին փուլում կմրցի ամենացածր վարկանիշ ունեցող Ղրղզստանի ներկայացուցիչ Միխայիլ Մարկովի հետ: Վերջինս Ղրղզստանի պատմության մեջ առաջին անգամ աշխարհի գավաթի մրցաշարի ուղեգիր է նվաճել: Այդ մրցախաղում Արոնյանի հաղթանակը կասկած չի հարուցում: Հաջորդ փուլում նրա մրցակիցը կլինի Իստրատեսկու-Լիսի մրցախաղի հաղթողը:**

**Սերգեյ Մովսիսյանը կմրցի նորվեգացի Յոն Լյուդվիգ Համերի հետ: Հրանտ Մելքումյանի մրցակիցը կլինի պերուացի Խուլիո Գրանդա Զունիգան, իսկ Վլադիմիր Հակոբյանը 2-րդ փուլի ուղեգրի համար կպայքարի վիետնամցի Նգուեն Սոնի հետ:**

## Հայրապետյանն ու Գրիգորյանը հետապնդում են առաջատարին

Բարսելոնում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Կարեն Գրիգորյանը հաղթեց Մարիա Պերպինյային, իսկ Հովիկ Հայրապետյանը հաշտություն կնքեց Սերգեյ Իվանովի հետ: Մեր շախմատիստները վաստակել են 5-ական միավոր: 6 միավորով առաջատարը Քրիստիան Կրուզն է, որը ոչ-ոքի խաղաց Մաուրիցիո Ֆլորեսի հետ:

## Աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոնները կսովորեն անվճար

**Հանրապետական ընդունող հանձնաժողովի 2-րդ նիստում ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը տեղեկացրել է, որ նախարարություն են դիմել աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոններ, աշակերտական օլիմպիադաների հաղթողներ, որոնց պետք է տրամադրվի անվճար ուսուցման հնարավորություն: Նրանց թիվը 20 է:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Աուրելիա Գրիգորիուն պաշտոն կստանա՞ Ադրբեջանում

Երեկ Մոլդովայի խորհրդարանի մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը քննարկել է Աուրելիա Գրիգորիուի՝ Երեւանում միջազգային գիտաժողովի շրջանակներում ելույթի՝ «Մոլդովայի խորհրդարանի տեսակետից համապատասխանության հարցը»: Այդ մասին հաղորդել է Publika.md-ն՝ հղում անելով խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Վադիմ Միշինին:

Վադիմ Միշինը տեղեկացրել է, որ հարցը քննարկվել է «Գրիգորիուի բացակայությամբ, նա գրավոր տեղեկացրել է, որ հիվանդ է, բուժում է ստանում, ինչպես նաեւ ենթարկվում է սպառնալիքների»: Հանձնաժողովը եկել է եզրակացության, որ «տիկին Գրիգորիուի ելույթը չի համապատասխանում Մոլդովայի խորհրդարանի տեսակետին, այն եղել է անձնական կարծիք եւ չի արտացոլում պետության (Մոլդովայի Հանրապետության-Վ. Ա.) դիրքորոշումը»:

Մոլդովայի խորհրդարանի մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահի գնահատմամբ, իրենք լավ են հասկանում, «թե որքան զգայուն խնդիր է դա, եւ որքան անարդարացի է գտնվել տիկին Գրիգորիուն այդ իրավիճակում, եթե հարկ կար դիմելու ՄԱԿ-ի փաստաթղթերին, ապա դա պետք է արվեր ընդհանուր համատեքստում, ոչ թե առանձնացվեին որոշ տարրեր, բայց տիկին Գրիգորիուն պետք է անդրադառնար Դնեստրի սառեցված հակամարտությանը, այլ ոչ թե խորհուրդներ տար Ադրբեջանին եւ Հայաստանին»:

Խնդրին անդրադարձել է նաեւ Մոլդովայի Մարդու իրավունքների ազգային ինստիտուտի ներկայացուցիչ Անատոլի Մունթիանուն: Նա ասել է, որ հանձնաժողովի քննարկումներում «ականատես է դարձել ամենածայրահեղ կարծիքների»՝ նկատի ունենալով Աուրելիա Գրիգորիուին խորհրդարանական փաստաբան-օմբուդսմենի մանդատից զրկելու առաջարկությունները:

Ըստ Publika.md-ի՝ Մոլդովայի խորհրդարանի մարդու իրավունքների հանձնաժողովը վերջնական որոշում կկայացնի ամենաուշը այսօր, որը կստորագրի հանձնաժողովի նախագահ Վադիմ Միշինը: Ըստ երեւույթին, դա կլինի Աուրելիա Գրիգորիուի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Մոլդովայի խորհրդարանի ղեկավարությանն արվող առաջարկություն: Ադրբեջանական haqqin.az-ը, հավանաբար տեղեկացված լինելով հենց Աուրելիա Գրիգորիուից, խնդրի առթիվ տեղեկատվությունը վերնագրել է այսպես՝«Մոլդովայի խորհրդարանի ղեկավարությունը՝ հօգուտ Հայաստանի եւ ընդդեմ իր օմբուդսմենի»:

Այսպիսով, Աուրելիա Գրիգորիուի հարցը կարելի է համարել արդեն լուծված, մեծ է հավանականությունը, որ նա կզրկվի խորհրդարանական փաստաբան-օմբուդսմենի մանդատից: Մնում է սպասել, թե ինչպե՞ս է ադրբեջանական կողմը փոխհատուցելու նրան: Հնարավո՞ր է, որ Գրիգորիուն նշանակվի Ադրբեջանի օմբուդսմեն: Մանավանդ որ այդ պաշտոնը զբաղեցնող Էլմիրա Սուլեյմանովան արդեն հասել է զառամյալ տարիքի, թե՞ Բաքվում նախապես են հոգացել Գրիգորիուի հետագա բարեկեցության հետ կապված հարցերը:

Բացառված չէ, որ Ադրբեջանում կփորձեն տեսք ընդունել, թե բոլորովին էլ «ծանոթ չեն» Աուրելիա Գրիգորիուին, որեւէ առնչություն չեն ունեցել նրա հետ, նույնիսկ տեղյակ չեն, թե ինչ եւ ինչու է նա ասել Երեւանում: Մեկ անգամ չէ, որ պաշտոնական Բաքուն հրապարակավ ուրացել է իր «վառված» գործակալներին: Գրիգորիուն ինչո՞ւ պիտի բացառություն կազմի: Բայց ամեն դեպքում Գրիգորիուի օրինակը, կարծում ենք, պիտի դաս լինի տարբեր տրամաչափի այն գործիչների համար, որ սեփական երկրի եւ արդարության շահը ստորադասում են «խավիարային դիվանագիտության» սույնրոպեական «բարիքներին»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | | |
| 1 | Բուզանդի 1/3 | 147.0 | հասարակական | 5 տարի | 147000 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ հուլիսի 29-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ. հուլիսի 29-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Թեյշեբաինի 1 շենք | Կաթսայատուն | 21,035 | 753.1 | 401,760,000 |
| 2 | Նոր Նորք 8-րդ մ/շ Մինսկի փողոց 5/8 ՇՁԿ | Կաթսայատուն | 24,671 | 3166.7 | 609,550,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ հուլիսի 29-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ հուլիսի 29-ը, ժամը 14.00-ը: 2013թ. հուլիսի 29-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի վարչական 2 մասնաշենքի շինարարության մրցույթ հետևյալ հասցեներով՝

1. քաղաք Երևան Էրեբունի համայնք Տիգրան Մեծի թիվ 74,
2. Արմավիրի մարզ քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 31-88-88 հեռախոսահամարով կամ այցելել Բանկի «Գնումների և մատակարարման» բաժին Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 09:30-16:00-ը (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է մինչև ս.թ. հուլիսի 19-ը:

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Մանկավարժության տեսության եւ պատմության ամբիոն**

դոցենտ - 6 հաստիք

ասիստենտ - 4 հաստիք

Համապատասխան պաշտոններին, ըստ տարակարգերի, կարող են հավակնել.

**դոցենտ** - մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք

**ասիստենտ-** մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Հավակնորդները համալսարանի անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում.

1. դիմում ռեկտորի անունով
2. կադրերի հաշվառման անձնական թերթիկ
3. քաղվածք աշխատանքային գրքույկից
4. համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական կարգով
5. բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը
6. գիտական աստիճանը եւ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները /առկայության դեպքում/
7 .տպագրված գիտական եւ մեթոդական աշխատանքների ցուցակը
8. բնութագիր վերջին աշխատավայրից
9. տվյալներ պարգեւների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի անձնակազմի հաշվառման բաժին:

Հասցե՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17, 200 սենյակ, հեռ՝ 59-70-84:

## «Երեւանի Հանրապետության հրապարակի վերակառուցման հայեցակարգային նախագծի հանրապետական ճարտարապետական բաց մրցույթ»-ի պայմաններում փոփոխություն կատարելու մասին

Երեւանի քաղաքապետարան են դիմել արտերկրյա մի շարք ճարտարապետներ, խնդրելով Երեւանի քաղաքապետարանի կողմից Հանրապետության հրապարակի ճարտարապետական բաց նախագծային մրցույթի համար հայտարարված պայմաններից հանել մասնակիցների քաղաքացիությանը վերաբերող սահմանափակումները, որպեսզի նրանք նույնպես հնարավորություն ունենան մասնակցել հայտարարված մրցույթին:

Հաշվի առնելով այդ հանգամանքը Երեւանի քաղաքապետարանը կատարել է անհրաժեշտ փոփոխություններ «Երեւանի Հանրապետու***թյան հրապարակի վերակառուցման հայեցակարգային նախագծի հանրապետական ճարտարապետական բաց մրցույթ»-ի 29.05.2013թ. հայտարարության մրցութային պայմաններում***

1. Հայտարարության տեքստի վերնագրից /**«Երեւանի Հանրապետության հրապարակի վերակառուցման հայեցակարգային նախագծի հանրապետական ճարտարապետական բաց մրցույթ**»/ հանել ***«հանրապետական»*** բառը:
2. Հայտարարության տեքստի «Մրցույթին մասնակցության պայմանները» մասում «**Հայաստանում**» -ի փոխարեն կարդալ ***«Հայաստանում եւ այլ երկրներում»:***
3. Հայտարարության տեքստի «Մրցույթի անցկացման եւ նախագծերի ներկայացման ժամկետները» մասում «**օգոստոսի 29-ը**» -ի փոխարեն կարդալ ***«հոկտեմբերի 15-ը»:***
4. Հայտարարության տեքստի «Մրցույթի արդյունքների ամփոփումը եւ մրցանակային ֆոնդը» մասում «**սեպտեմբեր ամսվա 20-ը**» -ի փոխարեն կարդալ ***«նոյեմբերի 5-ը»:***

**Երեւանի քաղաքապետարան**
**11.07.2013թ.**

## Վաճառվում է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

## Սրբագրում եւ խմբագրում

**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**

**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 11.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: